ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"ՖԻՆՔԱ" ՈՒՆԻՎԵՐՍԱԼ
ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Փակ բաժնետիրական ընկերության
միակ Բաժնետիրոջ 01 փետրվարի
2012 որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
Կենտրոնական բանկում
30.03. 2012թ.
Գրանցման No. 13

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
կողմից

Անուն, ազգանուն Ա.Ջավադյան

Փոփոխված է
01.02.2012թ.
"ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս
Կոոպերատիվ Յու.Էյ."
Տնօրեն Բի
Անուն, Ազգանուն
Դոնալդ Ֆրեդերիկ Քրեյն

# "ՖԻՆՔԱ"
# ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
# ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ-2012

**APPROVED BY THE**
Decision of the Sole Shareholder of
"FINCA" UNIVERSAL CREDIT ORGANIZATION
Closed Joint Stock Company as of 25 January 2012

As amended on 01.02.2012
Director of "FINCA Microfinance Coöperatief U.A."

By: Director B
Name: Donald Frederick Crane

**REGISTERED AT THE**
RA Central Bank
On 30/03/2012

Registration No. 13

Chairman of the Central Bank of Armenia,
By:
Name: A. Javadyan

# "FINCA"

## UNIVERSAL CREDIT ORGANIZATION
## CLOSED JOINT-STOCK COMPANY

# CHARTER

## (WITH NEW EDITION)

Yerevan – 2012

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն Կանոնադրությունը համարվում է «ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Վարկային կազմակերպություն») հիմնադիր փաստաթուղթը, որի դրույթները պարտադիր իրավական ուժ ունեն Վարկային կազմակերպության Բաժնետերերի և գործադիր մարմինների համար: Իր գործունեության իրականացման ընթացքում Վարկային կազմակերպությունն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ «Օրենսգիրք»), «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ «Օրենք»), վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենքներով, այլ իրավական ակտերով (բոլորը միասին՝ «Հայաստանի օրենսդրություն») և սույն Կանոնադրությամբ: Վարկային կազմակերպությունը սկսում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ») գրանցվելուց և վերջինիս կողմից լիցենզավորվելուց հետո:
Վարկային կազմակերպության պաշտոնական լեզուն հայերենն է, իսկ աշխատանքային լեզուները՝ հայերենը, ռուսերենը և անգլերենը:
Սույն Կանոնադրության մեջ մեծատառով օգտագործված բոլոր եզրույթներն ունեն այստեղ դրանց համար սահմանված իմաստը:

## GENERAL PROVISIONS

This Charter is deemed to be the founding document of "FINCA" Universal Credit Organization Closed Joint Stock Company, (hereinafter referred to as the "Credit Organization") the provisions of which shall be binding upon the Shareholders and the executive bodies of the Credit Organization. While carrying out its activities the Credit Organization shall be governed by the Civil Code of the Republic of Armenia (hereinafter referred to as the "Code"), the Law of the Republic of Armenia on "Joint Stock Companies" (hereinafter referred to as the "Law"), the laws regulating the activities of credit organizations, other legal acts (altogether referred to as "Armenian Law") and this Charter.
The Credit Organization shall commence its operations upon registration with and licensing by the Central Bank of Armenia (hereinafter "the CBA").
The official language of the Credit Organization shall be Armenian, and the working languages of the Credit Organization shall be Armenian, Russian and English.
All capitalized terms used in this Charter shall have the meaning set out herein.

## ՀՈԴՎԱԾ 1.
## ԲԱԺՆԵՏԵՐԵՐ, ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ

**1.1.** Բաժնետերեր:
Վարկային կազմակերպության Բաժնետերն է "ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու.Էյ."-ը, որը ձևավորվել է, հիմնադրվել և օրինական կարգով գոյություն ունի Նիդերլանդների օրենսդրության համաձայն և որի գտնվելու վայրի հասցեն է՝

## ARTICLE 1.
## SHAREHOLDERS, NAME AND LEGAL ADDRESS

**1.1. Shareholders.**
The Shareholder of the Credit Organization shall be "FINCA Microfinance Coöperatief U.A." incorporated and validly existing under the laws of Netherlands with its address Herengracht 450, 1017CA Amsterdam, Netherlands.

Հերենգրախտ 450, 1017 Սի-Էյ Ամստերդամ, Նիդերլանդներ:

**1.2.** Վարկային կազմակերպության անվանումը:
Վարկային կազմակերպության պաշտոնական առևտրային անվանումն է.

Հայերեն. *«ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ փակ բաժնետիրական ընկերություն*

Անգլերեն. "FINCA" UNIVERSAL CREDIT ORGANIZATION closed joint-stock company.

Ռուսերեն. «ФИНКА» УНИВЕРСАЛЬНАЯ КРЕДИТНАЯ ОРГАНИЗАЦИЯ закрытое акционерное общество.

Վարկային կազմակերպության անվանման կրճատ տարբերակն է.

Հայերեն. *«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ*
Անգլերեն. "FINCA" UCO CJSC:
Ռուսերեն. «ФИНКА» УКО ЗАО

**1.2. Name of the Credit Organization.**
The official trade name of the Credit Organization shall be:

In Armenian: *«ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ փակ բաժնետիրական ընկերություն*

In English: "FINCA" UNIVERSAL CREDIT ORGANIZATION closed joint-stock company.

In Russian: ФИНКА» УНИВЕРСАЛЬНАЯ КРЕДИТНАЯ ОРГАНИЗАЦИЯ закрытое акционерное общество.

The abbreviated name of the Credit Organization shall be:

In Armenian: *«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ*
In English: "FINCA" UCO CJSC.
In Russian: «ФИНКА» УКО ЗАО

**1.3.** Վարկային կազմակերպության իրավաբանական հասցեն:
Վարկային կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ագաթանգեղոսի 2ա: Երևանում գտնվող հիմնական գրասենյակից զատ Վարկային կազմակերպությունն իրավասու է Հայաստանի Հանրապետության տարածքում բացել Վարկային կազմակերպության գործունեության իրականացման համար անհրաժեշտ կամ ողջամտորեն պահանջվող մասնաճյուղեր և ներկայացուցչություններ: Վերջիններս պետք է գրանցվեն Հայաստանի օրենսդրությանը համապատասխան:

**1.3. Legal Address of the Credit Organization.**
The legal address of the Credit Organization shall be 2a Agatangeghos St., Yerevan, Republic of Armenia. Along with its principal office in Yerevan, the Credit Organization may open branch and representative offices within or outside the Republic of Armenia, as may be necessary or reasonable for the operations of the Credit Organization. Such offices shall be registered in accordance with the Armenian Law.

**1.4.** Վարկային կազմակերպության ժամկետը:
Վարկային կազմակերպությունը ստեղծվում է անսահմանափակ ժամկետով:

**1.4. Term of the Credit Organization.**
The Credit Organization is established for an unlimited period of time.

**1.5.** Կնիքը:
Վարկային կազմակերպությունը պետք է ունենա իր սեփական հաշվեկշիռը, հայերեն

**1.5. Seal.**
The Credit Organization shall have its own balance sheet, a round seal bearing its name in English and Armenian languages, logo, stamp and other items

և անգլերեն լեզուներով իր անվանումը պարունակող կլոր կնիք, ինչպես նաև խորհրդանշան, դրոշմ և իրավաբանական անձանցից օրենքով պահանջվող այլ նշաններ: Վարկային կազմակերպության Գլխավոր տնօրեը պարտավոր է ապահովել Վարկային կազմակերպության կնիքի անվտանգ պահպանությունը: Որևէ փաստաթղթի վրա կնիք դնելու դեպքում կնիքը պետք է հաստատվի Գլխավոր տնօրենի կամ այդ նպատակով սույն Կանոնադրության համաձայն լիազորված այլ անձի ստորագրությամբ:

as required by law for a legal entity. The General Director of the Credit Organization shall provide for the safe custody of the seal of the Credit Organization. The seal, when affixed to any instrument, shall be witnessed by the signature of the General Director or any other person so authorized in accordance with the provisions of this Charter.

## ՀՈԴՎԱԾ 2. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՈԼՈՐՏՆԵՐԸ

## ARTICLE 2. PURPOSES AND SPHERE OF ACTIVITIES OF THE CREDIT ORGANIZATION

**2.1.** Նպատակները:
Բացառությամբ Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների, Վարկային կազմակերպությունը տրամադրում է միկրոֆինանսավորման ծառայությունների ողջ տեսականին՝ նպատակ հետապնդելով կրճատել աղքատությունը, բարձրացնել զբաղվածության մակարդակը և խթանել ձեռներեցությունն ու Հայաստանի Հանրապետության բնակչության սոցիալական համախմբումը, ինչպես նաև ստանալ շահույթ Վարկային կազմակերպության գործունեությունից, որը հիմնականում պետք է ուղղվի այդ նպատակների իրագործմանը:

**2.1. Purposes.**
Except as may be limited by the Armenian Law, the Credit Organization shall provide a full range of microfinance services aimed at poverty alleviation, increasing the employment rate, and fostering entrepreneurship and social mobilization of the population of the Republic of Armenia as well as receiving a profit from the operations of the Credit Organization principally to achieve these objectives.

**2.2.** Գործունեության ոլորտը:
Վարկային կազմակերպության՝ սույնով նախատեսված նպատակներն իրագործելու համար Վարկային կազմակերպությունն իրավասու է, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա, զբաղվել գործունեության հետևյալ տեսակներով

**2.2. Sphere of Activities.**
To further the objectives of the Credit Organization set forth herein, the Credit Organization may, on the basis of a license issued by the CBA, carry out the following operations:

ա) Օրենքով թույլատրված սահմաններում՝ ներգրավել փոխառություններ և/կամ կնքել նմանատիպ գործարքներ, սակայն ոչ հրապարակային օֆերտայի միջոցով

a) to the extent permitted by law, attract borrowings and/or execute like transactions not by public offer;

| | |
|---|---|
| բ) Տրամադրել վարկեր, այդ թվում՝ ձեռնարկատիրական և սպառողական վարկեր, ինչպես նաև իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում (ֆակտորինգ), | b) extend loans, including business and consumer loans, and finance debt or commercial transactions (factoring); |
| գ) Տրամադրել երաշխիքներ, | c) provide guarantees; |
| դ) Թողարկել, գնել (զեղչել), վաճառել արժեթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր և այլ գործիքներ, այդ կապակցությամբ կատարել նման այլ գործառնություններ, | d) issue, purchase (discount) or sell securities, travelers checks, cards and other instruments and implement other operations in connection therewith; |
| ե) Մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական), | e) provide financial agent (representative) services, manage investments of other persons, carry out accredited management services, carry out specialized operations on the securities market (dealing, brokerage, agency, subdepositary); |
| զ) Մատուցել ֆինանսական խորհրդատվություն, | f) provide financial consulting; |
| է) Գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ անկանխիկ ձևով, | g) purchase and sell non-cash foreign currency, including execution of Dram and foreign exchange futures, options and other like transactions ; |
| ը) Իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ), | h) carry out leasing activities; |
| թ) Ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ, | i) accept on deposit precious metals, stones, jewelry, securities, documents and other valuables; |
| ժ) Ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքի հետ ստացման գործունեություն, և | j) create and maintain customer credit information system, perform debt collection operations; and |
| ժա) Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին | k) engage in any other activity permitted by the Central Bank of Armenia and specific to International practice of credit organizations |

բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ,, որը կնպաստի սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրագործմանը:

in furtherance of the objectives set forth in this Charter .

**ՀՈԴՎԱԾ 3.**
**ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ**

**ARTICLE 3.**
**LEGAL STATUS OF THE CREDIT ORGANIZATION**

3.1. Վարկային կազմակերպության իրավական կարգավիճակը:
Վարկային կազմակերպությունն ինքնուրույն իրավաբանական անձ է՝ ստեղծված որպես փակ բաժնետիրական ընկերություն Հայաստանի գործող օրենսդրության համաձայն: Վարկային կազմակերպությունը ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելու պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ, և ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ իրավունք ունի իրականացնել սույն Կանոնադրության 2.2 կետով նախատեսված ֆինանսական գործառնություններ:

**3.1. Legal Status of the Credit Organization.**
The Credit Organization shall be an independent legal entity formed as a closed joint-stock company in accordance with the applicable Armenian Law. The Credit Organization shall acquire the legal entity status as of the day of registration with the CBA, and shall be entitled to carry out the financial operations set forth in clause 2.2 of this Charter as of the effective day of the license issued by the CBA.

Հայաստանի օրենսդրության համաձայն Վարկային կազմակերպությունը որոշում է իր կառավարման կառուցվածքը, որոշումների կայացման կարգը, շուկայավարման քաղաքականությունը, գնագոյացման քաղաքականությունը, ֆինանսավորման կառուցվածքը, աշխատողների վարձատրության քաղաքականությունը, շահութաբաժինները, ինչպես նաև իր գործարար գործունեության և ներքին կառավարման բոլոր այլ առանձնահատկությունները: Վարկային կազմակերպությունը ֆինանսապես լրիվ անկախ է և ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

In accordance with the Armenian Law, the Credit Organization shall determine its management structure, decision-making procedures, marketing policy, pricing policy, financing structure, labor compensation policy, and dividends as well as all other aspects of its business and internal governance. The Credit Organization shall be completely independent financially and shall maintain an independent balance sheet.

Վարկային կազմակերպությունն իր գործունեությունը մշտապես իրականացնում է Հայաստանի օրենսդրությանը համապատասխան:

The Credit Organization shall carry out its activities at all times in accordance with the Armenian Law.

3.2. Վարկային կազմակերպության իրավունքները:
Իր առաքելությունը կատարելու նպատակով

**3.2. Rights Of The Credit Organization**

To carry out its mission, the Credit Organization

Վարկային կազմակերպությունը Հայաստանի օրենսդրությամբ թույլատրված առավելագույն չափով ունի հետևյալ օրինական իրավունքները.

shall have the following legal rights to the fullest extent permitted by the Armenian Law:

ա) Հայաստանի օրենսդրության համաձայն լինել ինքնուրույն իրավաբանական անձ՝ դրա կապակցությամբ և դրանից ծագող բոլոր իրավունքներով և պարտականություններով, և ստեղծել Հայաստանի օրենսդրությամբ թույլատրված առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ Հայաստանի Հանրապետության տարածքում և դրանից դուրս,

a) be an independent legal entity in accordance with the Armenian Law with all rights and duties relating thereto and arising therefrom, and create subsidiaries, branch and representative offices within and outside the Republic of Armenia, as permitted by the Armenian Law;

բ) Գործող օրենսդրությամբ թույլատրված չափով՝ դոնորներից, փոխատուներից և այլ վարկային հաստատություններից ոչ հրապարակային օֆերտայի միջոցով ստանալ վարկեր և փոխառություններ այնպիսի պայմաններով և արժույթներով, որոնք Վարկային կազմակերպությունը կարող է ընդունելի համարել, եթե դա Հայաստանի օրենսդրությամբ արգելված չէ, ինչպես նաև ապահովել փոխառված, ներգրավված կամ պարտք միջոցների վճարումը Վարկային կազմակերպության գույքով, գույքային իրավունքներով կամ այլ ակտիվներով, կամ դրանց մի մասով, և իրականացնել ցանկացած այլ գործունեություն, որը կնպաստի 2.1 հոդվածով նախատեսված նպատակների իրագործմանը,

b) to the extent permitted by applicable laws, obtain loans and credits from donors, lenders and other credit institutions not by public offer upon such terms and in such currencies as the Credit Organization may consider appropriate, if not otherwise prohibited by the Armenian Law; to secure payment upon monies borrowed, raised or owing using all or any part of the property, property rights or other assets of the Credit Organization, and carry out all other operations in furtherance of the purposes described in Article 2.1 above;

գ) Հայաստանի Հանրապետության տարածքում կատարել ուղղակի ներդրումներ և գործառնություններ արժեթղթերի հետ՝ արժեթղթերը և ներդրումային գործունեությունը կարգավորող գործող օրենսդրության համաձայն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին և սույն Կանոնադրությանը համապատասխան,

c) make direct investments and operations with securities in the Republic of Armenia according to applicable laws regulating securities and investment activity, and in accordance with normative acts of the CBA and this Charter;

դ) Գնել և վաճառել պարտամուրհակներ,

d) purchase and sell notes, carry out financial leasing operations, in which the Credit

իրականացնել ֆինանսական վարձակալության գործառնություններ, որոնցում Վարկային կազմակերպությունը հանդես է գալիս որպես միջնորդ որևէ գույքի մատակարարի և արտադրողի միջև՝ ֆինանսավորելով մատակարարի կամ արտադրողի գույքի վաճառքը հաճախորդին տրվող վարկի պայմաններով այդ գույքը գնելու և վաճառելու միջոցով,

Organization shall act as an intermediary between a supplier and a producer of property, by financing the sale of the supplier's or the producer's property through the purchase and sale thereof on terms of a loan to the customer;

ե) միևնույն իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրել վարկեր, որոնց գումարը չի կարող գերազանցել ԱՄՆ 40 000 (քառասուն հազար) դոլարի դրամային համարժեքը, որը որոշվում է վարկը տրամադրելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած հաշվարկային փոխարժեքով կամ օրենքով կամ տվյալ վարկային պայմանագրով սահմանված այլ փոխարժեքով, բացառությամբ այն վարկերի, որոնք տրամադրվում են Ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձանց այդ անձանց կարճաժամկետ իրացվելիության խնդիրները լուծելու նպատակով և որոնց գումարը կարող է գերազանցել ԱՄՆ 40 000 (քառասուն հազար) դոլարը կամ դոլարի դրամային համարժեքը,

e) extend loans to one and the same entity or individual in the amount not exceeding an amount in AMD equivalent to US $ 40 000 (forty thousand) US dollars at an official exchange rate of the. Central Bank of Armenia determined by the Central Bank on the date of the loan provision or other exchange rate determined by the law or loan agreement except the loans provided to the affiliated entities with the purpose to solve the short-term liquidity issues in the amount exceeding an amount in AMD equivalent to US $ 40 000 (forty thousand US dollars) or US $ 40 000 (forty thousand) US dollars

զ) Տրամադրել վարկեր Հայաստանի Հանրապետության ֆիզիկական և իրավաբանական անձանց, բացառությամբ այն իրավաբանական անձանց, որոնց միակ սեփականատերը պետությունն է, կամ որոնցում պետությունը խոշոր բաժնետեր է,

f) make loans to individuals and legal entities of the Republic of Armenia, except for legal entities fully owned by the state or in which the state is a major shareholder;

է) Բացառապես իր հայեցողությամբ և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի համաձայն, սահմանել տոկոսադրույքներ, միջնորդավճարներ և վարկ տրամադրելու առնչությամբ մատուցված այլ ծառայությունների դիմաց գանձվող վճարներ,

g) define, at its sole discretion and in accordance with the normative acts of the CBA, interest rates, commission fees and other fees for services rendered in connection with extending a loan;

ը) Վարկային կազմակերպության

h) withdraw and sell the property pledged by a

նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով իրացնել և վաճառել գրավատուի կողմից գրավադրված գույքը,

pledgor for discharging obligations to the Credit Organization;

թ) Հայաստանի Հանրապետության այլ վարկային և ֆինանսական կազմակերպությունների, իրավաբանական անձանց և քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական անձանց հետ ստեղծել միավորումներ և այլ միություններ,

i) create associations and other unions with other credit and financial organizations, legal entities and citizens of the Republic of Armenia as well as foreign legal entities;

ժ) Խմբավորել իր ակտիվները և վարկային պորտֆելը, հնարավոր կորուստները ծածկելու նպատակով ձևավորել պահուստներ, դուրս գրել անհուսալի վարկերը, ինչպես նաև ճշգրտել հնարավոր կորուստների պահուստի չափը ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան,

j) itemize its assets and credit portfolio, form reserves to cover potential losses, write off bad loans, as well as adjust reserves to cover potential losses in accordance with the normative acts issued by the CBA;

ժա) Գնել, վարձակալել, ստանալ, ներդնել, որևէ օրինական եղանակով վերցնել կամ այլ կերպ ձեռք բերել, տիրապետել, տնօրինել, բարելավել, օգտագործել և այլ գործողությունների ենթարկել անշարժ և շարժական գույք, ինչպես նաև վերջինիս հետ կապված ցանկացած իրավունք, ինչպես նաև վաճառել, փոխանցել, վարձակալել, փոխանակել կամ այլ կերպ օտարել, գրավադրել կամ ծանրաբեռնել իր գույքը և ակտիվները, կամ դրանց ցանկացած մաս, կամ դրանց հետ կապված ցանկացած իրավունք,

k) purchase, lease, receive, invest, take by any legal means, or otherwise acquire, own, hold, improve, use and otherwise deal in and with immovable and movable property or any interest therein, and sell, convey, lease, exchange, transfer or otherwise dispose of, pledge or otherwise encumber all or part of its property and assets, or any interest therein;

ժբ) Կնքել պայմանագրեր, կրել պարտավորություններ, ոչ հրապարակային օֆերտային միջոցով ներգրավել գումարներ, թողարկել մուրհակներ, պարտամուրհակներ և այլ պարտատոմսեր, ինչպես նաև հիփոթեքով, գրավով կամ իր ակտիվների, գույքի, իրավունքների և եկամտի, կամ դրանց ցանկացած մասի այլ ծանրաբեռնվածության միջոցով

l) make contracts, incur liabilities, borrow money by non public offer, issue notes, bonds and other obligations, and secure any of its obligations by mortgage, pledge or other encumbrance of all or any of its assets, property, rights and income, and make contracts of guaranty and suretyship which are necessary or convenient to the conduct, promotion or attainment of its business;

ապահովել իր պարտավորությունների կատարումը, ինչպես նաև կնքել երաշխիքային և երաշխավորության պայմանագրեր, որոնք անհրաժեշտ են կամ նպատակահարմար իր գործար գործունեության իրականացման, խթանման կամ արդյունքների ապահովման համար,

ժգ) Իր Բաժնետերերի և երրորդ անձանց հետ կնքել գործարքներ Հայաստանի օրենսդրության և սույն Կանոնադրության համաձայն,

m) conclude transactions with its Shareholders and third parties in accordance with the Armenian Law and this Charter;

ժդ) Ներմուծել և արտահանել իր գործունեության իրականացման համար անհրաժեշտ ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ,

n) import and export goods, supplies and services necessary for its operations;

ժե) Բացել, ունենալ և օգտագործել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի օրենսդրության համաձայն, ինչպես նաև այլ երկրներում, դրամով և/կամ արտարժույթով,

o) open, maintain and utilize bank accounts in the Republic of Armenia, according to the Armenian Law, and in other countries, in AMD and/or in foreign currencies;

ժզ) Իրականացնել իր ֆինանսական գործունեությունը կամ դրամով կամ այլ արտարժույթով՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

p) carry out its financial activities either in AMD or in any other foreign currency as defined by the law of the Republic of Armenia on "Currency Regulation and Control";

ժէ) Հայաստանի Հանրապետության տարածքում և դրանից դուրս դատարաններում և արբիտրաժային մարմիններում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող, դատավարության շրջանակներում հետամուտ լինել դատավճիռների կայացման և ճանաչման, ի կատար ածման և հարկադիր կատարման, ինչպես նաև վեճերի խաղաղ լուծման վերաբերյալ հաշտություն կնքել,

q) be a plaintiff and defendant before courts and arbitral tribunals within and outside the Republic of Armenia, and to pursue such proceedings to judgment and recognition, enforcement and execution of judgment, and to conclude amicable settlements of dispute;

ժը) Աշխատանքի ընդունել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց, և որոշել

r) employ citizens of the Republic of Armenia and foreign persons and entities and determine scope of employment and remuneration thereof;

նրանց աշխատանքային պարտականությունների շրջանակը և վարձատրության չափը,

ժթ) Իրականացնել ցանկացած այլ գործունեություն, որը կապված է Վարկային կազմակերպության նպատակների հետ և ուղղակիորեն արգելված չէ Հայաստանի օրենսդրությամբ:

s) engage in such other activities, which are connected with the Credit Organization's purposes and which are not specifically prohibited by the Armenian Law..

Վարկային կազմակերպության իրավունքները կարող են սահմանափակվել միայն Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

The rights of the Credit Organization may be restricted only in the cases and in the order established by the Armenian Law.

Վարկային կազմակերպությունը իրավունք չունի հրապարակային օֆերտայի միջոցով ներգրավել փոխառություններ և կանխիկ ձևով գնել և/կամ վաճառել արտարժույթ:

The Credit Organization is not entitled to attract borrowings by public offer as well as sell and/or buy cash foreign currency.

Անկախ վերոգրյալից, Վարկային կազմակերպությունն ունի Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված իրավունքները և պարտավորությունները՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք դրանք ուղղակիորեն կամ հղում կատարելու միջոցով ներառվել են սույն Կանոնադրության մեջ, թե ոչ:

Notwithstanding the above, the Credit Organization has the rights and obligations prescribed by the Armenian Law, whether they are incorporated into this Charter, expressly or by reference, or not.

## ՀՈԴՎԱԾ 4. ԴՐՈՒՅԹՆԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

## ARTICLE 4. LIABILITY PROVISIONS

**4.1. Սահմանափակ պատասխանատվություն:**

Վարկային կազմակերպության պատասխանատվությունն իր պարտքերի և ֆինանսական պարտավորությունների համար սահմանափակվում է Վարկային կազմակերպությանը պատկանող ամբողջ գույքով:

**4.1. Limited Liability.**

The Credit Organization's liability for its debts and financial obligations shall be limited to the extent of all of its property.

Վարկային կազմակերպության բաժնետերերը պատասխանատու չեն Վարկային կազմակերպության պարտավորությունների և պատասխանատվության համար, և ընդամենը կապիտալում իրենց մասնակցության սահմաններում կրում են

Shareholders of the Credit Organization shall not be liable for the Credit Organization's obligations and liabilities, and shall bear the risk of losses in connection with the operation of the Credit Organization only to the extent of their respective capital contribution, as valued at the time a Shareholder subscribed for or purchased his or her share or shares.

Վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վնասների ռիսկը, ընդ որում, այդ մասնակցության չափը որոշվում է այն պահի դրությամբ, երբ Բաժնետերը բաժանորդագրվել է իր բաժնետոմսի/-երի համար կամ գնել է դրանք:

Բաժնետերերը պատասխանատու չեն այլ Բաժնետերերի պարտավորությունների և պատասխանատվության համար: Վարկային կազմակերպությունը պատասխանատու չէ Բաժնետերերի պարտավորությունների կամ պատասխանատվության համար:

Shareholders shall not be liable for each other's obligations and liabilities. The Credit Organization shall not be liable for the obligations or liabilities of the Shareholders.

ՀՀ կենտրոնական բանկը և Վարկային կազմակերպությունը պատասխանատու չեն միմյանց պարտավորությունների համար, եթե Հայաստանի օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

The CBA and the Credit Organization shall not be responsible for the obligations of each other, unless otherwise provided by the Armenian Law.

**4.2. Փոխհատուցում:**

Վարկային կազմակերպությունը կարող է Հայաստանի օրենսդրությամբ թույլատրված կամ պահանջվող առավելագույն չափով փոխհատուցել Տնօրեններին, Բաժնետերերին, կառավարիչներին և պաշտոնատար անձանց: Վարկային կազմակերպությունը կարող է նախապես փոխհատուցել Տնօրենին, Բաժնետիրոջը, կառավարչին կամ պաշտոնատար անձին նրանց կողմից կատարվելիք ծախսերի դիմաց, եթե ստացվել է տվյալ Տնօրենի, Բաժնետիրոջ, կառավարչի կամ պաշտոնատար անձի պահանջի ներկայացման ամսաթվի դրությամբ Վարկային կազմակերպության ռեեստրում նշված Բաժնեաերերի մեծամասնության համաձայնությունը, և եթե Վարկային կազմակերպությունը տվյալ Տնօրենից, Բաժնետիրոջից, կառավարչից կամ պաշառնատար անձից ստացել է հանձնառություն այն մասին, որ վերջինս կվերադարձնի փոխհատուցման գումարը Վարկային կազմակերպությանը, եթե հետագայում պարզվի, որ տվյալ Տնօրենը, Բաժնետերը, կառավարիչը կամ պաշտոնատար անձն իրավունք չունի այդ ծախսերի դիմաց փոխհատուցում ստանալ

**4.3. Indemnification.**

The Credit Organization may indemnify the Directors, Shareholders, managers and officers to the fullest extent permitted or required by the Armenian Law, and the Credit Organization may advance expenses incurred by the Director, Shareholder, manager or officer upon the approval of a majority of the Shareholders named in the Credit Organization's registry as of the date of the request from such Director, Shareholder, manager or officer and the receipt by the Credit Organization of an undertaking by such Director, Shareholder, manager or officer to reimburse the Credit Organization in the event it shall ultimately be determined that such Director, Shareholder, manager or officer is not entitled to be indemnified by the Credit Organization for such expenses. The Credit Organization may also indemnify its employees and other representatives or agents to the fullest extent permitted by applicable laws, provided that the indemnification in each such situation is first approved by all of the Shareholders.

Վարկային կազմակերպությունից: Վարկային կազմակերպությունը կարող է գործող օրենսդրությամբ թույլատրված առավելագույն չափով փոխհատուցում տրամադրել նաև իր աշխատակիցներին, այլ ներկայացուցիչներին կամ գործակալներին, սակայն պայմանով, որ յուրաքանչյուր նման դեպքի համար այդ փոխհատուցումը պետք է նախապես հաստատվի բոլոր Բաժնետերերի կողմից:

## ՀՈԴՎԱԾ 5. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

## ARTICLE 5. THE PROPERTY OF THE CREDIT ORGANIZATION

**5.1.** Գույքը:
Վարկային կազմակերպության գույքը պատկանում է Վարկային կազմակերպությանը տվյալ գույքի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքների ուժով: Վարկային կազմակերպության գույքը ներառում է.

**5.1. Property.**
The property of the Credit Organization belongs to it by virtue of the Credit Organization's ownership rights thereof. The property of the Credit Organization includes:

ա) Բաժնետոմսերի դիմաց վճարման տեսքով Բաժնետերերի ներդրած բոլոր միջոցները,

a) all funds invested by Shareholders in the form of payments for shares;

բ) Վարկային կազմակերպության գործունեությունից ստացված եկամուտը,

b) income received from the operations of the Credit Organization;

գ) Չբաշխված շահույթը,

c) non-allocated profit;

դ) Հայաստանի օրենսդրության համաձայն Վարկային կազմակերպության ձեռք բերած գույքը:

d) property acquired by the Credit Organization in accordance with the Armenian Law.

Վարկային կազմակերպության կողմից գույքի նկատմամբ սեփականության իրավունքների ձեռքբերման և դրանց դադարեցման հետ կապված բոլոր խնդիրները, գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի օրենսդրությամբ, ինչպես նաև նման գործառնություններ կարգավորող այլ կիրառելի օրենսդրությամբ:

All the issues related to the Credit Organization's acquisition of ownership rights over property and the termination thereof, particularities of possession, use and disposition of property shall be determined by the Armenian Law as well as by other applicable laws governing such transactions.

Վարկային կազմակերպության գույքը կարող

The property of the Credit Organization may be

է առգրավվել միայն Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

## ՀՈԴՎԱԾ 6.
## ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ, ԱՅԼ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

**6.1.** Կանոնադրական կապիտալը: Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված գումարից («Կանոնադրական կապիտալ»): Վարկային կազմակերպության Կանոնադրական կապիտալը հավասար է թողարկված և Բաժնետոմսերի կողմից ձեռք բերված բոլոր բաժնետոմսերի ընդհանուր արժեքին:

Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 1 364 720 000 ՀՀ դրամ՝ կազմված ոչ փաստաթղթային տեսքով թողարկված 136 472 սովորական բաժնետոմսերից («Սովորական բաժնետոմսեր»): Ընդ որում, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 10 000 ՀՀ դրամ է: Բոլոր 136 472 սովորական բաժնետոմսերը տեղաբաշխվում են Վարկային կազմակերպության միակ Բաժնետիրոջը, որը վճարում է դրանց ողջ արժեքը:

**6.2.** Կանոնադրական կապիտալի փոփոխումը: Բաժնետոմսերի թողարկումը: Վարկային կազմակերպության Կանոնադրական կապիտալը կարող է ավելացվել՝ մեծացնել Վարկային կազմակերպության բաժնետոմսերի անվանական արժեքը կամ տեղաբաշխելով լրացուցիչ բաժնետոմսեր, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լիովին վճարված են: Լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով Վարկային կազմակերպության Կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին որոշումը կարող է ընդունվել Հայաստանի օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ նախատեսված կարգի համաձայն: Վարկային կազմակերպության

seized only in the cases and in an order prescribed by the Armenian Law.

## ARTICLE 6.
## CHARTER CAPITAL AND SHARES OF THE CREDIT ORGANIZATION, OTHER FUNDS

**6.1. Charter Capital.**
The Charter Capital of the Credit Organization cannot be less than the amount established by the CBA ("Charter Capital"). The Credit Organization shall have the Charter Capital equal to the total value of all issued shares acquired by the Shareholders.

The Charter Capital of the Credit Organization shall constitute AMD 1 364 720 000 comprised of 136 472 common shares issued in non-documentary form with nominal value of AMD 10 000 per share ("Common Shares"). All 136 472 Common Shares shall be allocated to and fully paid by the Sole Shareholder of the Credit Organization."

**6.2. Changes in the Charter Capital; Share Issuance.**
The Charter Capital of the Credit Organization may be increased by increasing the nominal value of the shares of the Credit Organization or by issuing additional shares, if all previously issued shares are fully paid. The decision on increasing the Charter Capital of the Credit Organization through issuance of additional shares may be adopted according to the procedure prescribed by the Armenian Law and this Charter. Increases in the Charter Capital of the Credit Organization shall become effective as of the day of registration of the amended Charter reflecting such change with the CBA.

Կանոնադրական կապիտալի ավելացումներն ուժի մեջ են մտնում այդ փոփոխությունն արտացոլող՝ փոփոխված Կանոնադրությունը ՀՀ կենտրոնական բանկում գրանցելու օրվանից:

**6.3.** Արտոնյալ բաժնետոմսեր, բաժնետոմսերի այլ տեսակներ:
Վարկային կազմակերպությունն իրավունք ունի թողարկել Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված արտոնյալ բաժնետոմսեր՝ փոփոխելով Կանոնադրության այն դրույթները, որոնք վերաբերում են արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերին բաշխվող շահութաբաժինների չափին, դրանց բաշխման կարգին, ինչպես նաև բաժնետոմսի յուրաքանչյուր տեսակի սեփականատերերի իրավունքներին: Թողարկված արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը չի կարող գերազանցել Վարկային կազմակերպության Կանոնադրական կապիտալի 25 տոկոսը:
Վարկային կազմակերպությունը կարող է ժամանակ առ ժամանակ Բաժնետերերի ժողովի որոշմամբ ստեղծել, թողարկել և տեղաբաշխել ցանկացած այլ տեսակի կամ դասի բաժնետոմսեր: Բաժնետերերի ժողովի կողմից սահմանվում են բաժնետոմսերի նոր տեսակի կամ դասի սեփականատերերի իրավունքները և/կամ սահմանափակումները, բաժնետոմսերի վճարման պայմանները, ինչպես նաև դրանց թողարկման ու տեղաբաշխման կարգը և ժամկետները: Չնայած վերոգրյալին, սովորական բաժնետոմսերը պետք է կազմեն Վարկային կազմակերպության Կանոնադրական կապիտալի առնվազն 75%-ը:

**6.3. Preferred Shares; Other Classes of Shares.**
The Credit Organization shall have the right to issue preferred shares as provided for under Armenian Law on the condition of amending the Charter with respect to the size and procedure for distribution of dividends to shareholders owning preferred shares, and the rights endowed by each type of share. The nominal value of the issued preferred shares shall not exceed 25 per cent of the Charter Capital of the Credit Organization.
The Credit Organization may from time to time create, issue and allot any other class or type of shares through a decision of the Shareholders' Meeting. The Shareholders' Meeting shall define the rights and/or restrictions of the owners of the new type or class of shares, the terms of payment for the shares and the procedure and timing for the issuance and allotment of the shares. Notwithstanding the above, the common shares shall constitute at least 75% of the Charter Capital of the Credit Organization.

**6.4.** Փակ բաժանորդագրություն:
Վարկային կազմակերպության բաժնետոմսերը տեղաբաշխվում են Բաժնետերերին փակ բաժանորդագրության միջոցով՝ անվանական արժեքով կամ շուկայական արժեքով, Հայաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:

**6.4. Closed subscription.**
The shares of the Credit Organization shall be allocated among the Shareholders through closed subscription at the nominal value or at a market value, in an order defined by the Armenian Law.

**6.5.** Կանոնադրական կապիտալի

**6.5. Changes in the Charter Capital; Additional**

փոփոխումը: Լրացուցիչ բաժնետոմսերի թողարկումը:
Բաժնետերերի ժողովի որոշմամբ, եթե նախկինում թողարկված բոլոր բաժնետոմսերը լիովին վճարված են, Կանոնադրական կապիտալը կարող է, ի թիվս այլ եղանակների, ավելացվել շահույթի մի մասը Կանոնադրական կապիտալ փոխանցելու միջոցով: Կանոնադրական կապիտալի ավելացումներն ուժի մեջ են մտնում Հայաստանի գործող օրենսդրության համաձայն:

**Share Issuance.**
By a decision of the Shareholders' Meeting and if all previously issued shares have been fully paid, the Charter Capital may be increased, among other things, through reinvested profits. Increases in the Charter Capital shall be effectuated in accordance with applicable Armenian Law.

ա) Եթե Կանոնադրական կապիտալն ավելացնելու համար պահանջվում են լրացուցիչ դրամական վճարումներ Բաժնետերերի կողմից, ապա, սույն Կանոնադրության դրույթների համաձայն, յուրաքանչյուր Բաժնետեր պարտավոր է իրեն տեղաբաշխված նոր թողարկման բաժնետոմսերի արժեքի առնվազն 50%-ը վճարել Վարկային կազմակերպության որևէ թղթակից հաշվի՝ Բաժնետերերի ժողովի կողմից սահմանված պայմաններին համապատասխան, սակայն Կանոնադրական կապիտալի համապատասխան ավելացումը գրանցելու համար պահանջվող փաստաթղթերը ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից ոչ ուշ: Յուրաքանչյուր Բաժնետեր պարտավոր է իր բաժնետոմսերի արժեքի մնացած մասը վճարել ոչ ուշ, քան լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում:

a) In the event an increase in the Charter Capital requires additional monetary payments by Shareholders, and subject to the terms of the present Charter, each of the Shareholders shall pay at least 50% of the respective value of shares of the new issuance allocated to it to a correspondent account of the Credit Organization in accordance with such terms as indicated by the Shareholders' Meeting, but not later than on the date of submission to the CBA of the documents required for the registration of the relevant increase in the Charter Capital. Each Shareholder must pay the remaining value of its shares no later than one year after the allocation of the additional shares.

բ) Եթե Բաժնետերերից մեկը հրաժարվում է բաժանորդագրվել իրեն առաջարկվող բաժնետոմսերին կամ դրանց մի մասին, ապա այն բաժնետոմսերը, որոնցից նա հրաժարվել է, համամասնության սկզբունքով առաջարկվում են մնացած Բաժնետերերին կամ, Բաժնետերերի համաձայնությամբ, տնօրինվում այլ կերպ՝ Հայաստանի օրենսդրությանը համապատասխան:

b) In the event that a Shareholder declines to subscribe to all or a portion of the shares offered to him, such declined shares shall be offered pro-rata to the remaining Shareholders or as otherwise agreed by the Shareholders in accordance with the Armenian Law.

գ) Բաժնետերերի ժողովը կարող է

c) The Shareholders' Meeting may decide to

Կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին որոշում կայացնել միայն ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ, եթե Վարկային կազմակերպության պարտատերերը չեն առարկում Կանոնադրական կապիտալ նվազեցմանը, արդար շուկայական գնով մարելով Բաժնետերերի բաժնետոմսերի մի մասը՝ դրանք չեղյալ հայտարարելու նպատակով, կամ նվազեցնելով բաժնետոմսերի անվանական արժեքը և անվանական արժեքի տարբերությունը վճարելով յուրաքանչյուր Բաժնետիրոջ: Այդ կերպ կապիտալը նվազեցնելուց հետո Վարկային կազմակերպության Կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել Հայաստանի օրենսդրությամբ պահանջվող նվազագույն չափից:

decrease the Charter Capital only with the consent of the CBA and with no objection from the Credit Organization's creditors by redeeming some of the shares of the Shareholders at fair market value with the purpose of their cancellation or by lowering the nominal value of shares and paying back the difference in nominal values to each Shareholder. After such capital decrease, the Charter Capital of the Credit Organization cannot be lower than the minimum amount required by the Armenian Law.

**6.6.** Բաժնետոմսերի համախմբումը և բաժանումը:
Վարկային կազմակերպությունն իրավունք ունի Բաժնետերերի ժողովի որոշմամբ համախմբել իր բաժնետոմսերը՝ մեծացնելով դրանց անվանական արժեքը, կամ բաժանել իր բաժնետոմսերն ավելի փոքր անվանական արժեքով բաժնետոմսերի:

**6.6. Consolidation and Split of Shares.**
The Credit Organization may upon the decision of the Shareholders' Meeting consolidate its shares by increasing the nominal value thereof or split them into shares with a smaller nominal value.

**6.7.** Բաժնետերերի ռեեստրը:
Վարկային կազմակերպությունը Հայաստանի օրենսդրությանը համապատասխան ապահովում է բաժնետերերի ռեեստրի («Բաժնետերերի ռեեստր») վարումը: Բաժնետերերի ռեեստրը վարվում է Վարկային կազմակերպության կամ բաժնետերերի ռեեստրներ վարելու համար լիցենզավորված անկախ իրավաբանական անձի կողմից: Բաժնետերերի ռեեստրը պարունակում է տվյալներ թողարկված բաժնետոմսերի քանակի և դասի, դրանց անվանական արժեքի, յուրաքանչյուր Բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի ձեռքբերման ամսաթիվը, յուրաքանչյուր Բաժնետիրոջ անունը և գտնվելու վայրը (հասցեն), Բաժնետիրոջը պատկանող բաժնետոմսերի քանակությունը, դրանց ձեռքբերման արժեքը, բաժնետոմսերի գրավադրման իրավունք ունեցող անձանց

**6.7. Shareholder Register.**
The Credit Organization shall provide for the keeping and maintenance of the register of shareholders ("Shareholder Register") in accordance with Armenian Law. The Shareholder Register shall be kept by the Credit Organization or an independent legal entity licensed to keep and maintain shareholders registers. The Shareholder Register shall contain data on number and class of the issued shares, their nominal value, date of acquisition of the shares by a Shareholder, name and location (address) of each Shareholder, number of the shares owned by the Shareholder, as well as their acquisition value, the requisites of persons having the pledge rights to the shares and such other information as may be required by Armenian Law.

վավերապայմանները (ռեկվիզիտներ) և Հայաստանի օրենսդրությամբ պահանջվող այլ տեղեկություններ:

**6.8.** Պահուստային հիմնադրամ:
Վարկային կազմակերպության շահույթի հաշվին ստեղծվում է Կանոնադրական կապիտալի 15%-ին (տասնհինգ տոկոս) հավասար պահուստային հիմնադրամ: Վարկային կազմակերպության պահուստային հիմնադրամը ձևավորվում է Վարկային կազմակերպության զուտ շահույթից տարեկան պարտադիր 5% մասհանումների հաշվին՝ մինչև հիմնադրամը հասնի Կանոնադրական կապիտալի 15%-ի:
Պահուստային հիմնադրամը կարող է օգտագործվել Վարկային կազմակերպության կորուստները ծածկելու, ինչպես նաև Վարկային կազմակերպության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

**6.8. Reserve Fund.**
A reserve fund equal to 15% (fifteen percent) of the Charter Capital shall be created from the profit of the Credit Organization. The reserve fund of the Credit Organization shall be formed by compulsory annual deductions in the amount of 5% from net profits of the Credit Organization until the fund reaches 15% of its Charter Capital.
The reserve fund may be used to cover losses of the Credit Organization, as well as for retirement of debentures and redemption of stock of the Credit Organization in the event that no other funds are available. The reserve fund shall not be used for any other purposes.

**6.9.** Այլ հիմնադրամ:
Վարկային կազմակերպությունը կարող է Հայաստանի գործող օրենսդրության պահանջները կատարելու նպատակով ստեղծել այլ հիմնադրամներ:

**6.9. Other Funds.**
The Credit Organization may establish other funds to comply with applicable Armenian laws.

## ՀՈԴՎԱԾ 7.
## ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ

**7.1.** Բաժնետոմսերի օտարումը:
Հայաստանի օրենսդրությամբ թույլատրված չափով՝ Բաժնետերերի կողմից բաժնետոմսերի փոխանցումը կատարվում է առանց որևէ սահմանափակումների: Չնայած վերոգրյալին, վաճառքի և/կամ օտարման համար առաջարկվող բաժնետոմսերի («Առաջարկվող բաժնետոմսեր») նկատմամբ սեփականության իրավունքների որևէ վաճառք կամ օտարում չի կարող իրականացվել, եթե բոլոր մյուս Բաժնետերերը կամ Վարկային կազմակերպությունը սույն Հոդվածի 7.2

## ARTICLE 7.
## SHARE TRANSFER

**7.1. Transfer of Shares.**
To the extent permitted by the Armenian Law, the transfer of shares by the Shareholders shall be made without any limitations. Notwithstanding the foregoing, no sale of or any transfer of ownership rights to the shares offered for sale and/or transfer (the "Offered Shares") may be effected unless all other Shareholders or the Credit Organization exercise their preemption rights to purchase the Offered Shares under and in conformity with paragraph 7.2 of this Article. Any share transfer shall become effective after the entry thereof is made in the Register of Shareholders of the Credit Organization. The provisions of paragraph 2 of the present article shall also apply to the pledge of shares and their subsequent execution; however,

կետի համաձայն չեն իրականացրել Առաջարկվող բաժնետոմսերը ձեռք բերելու՝ նախապատվության իրավունքը: Բաժնետոմսերի ցանկացած օտարում ուժի մեջ է մտնում Վարկային կազմակերպության Բաժնետերերի ռեեստրում այդ մասին գրառում կատարելուց հետո: Սույն հոդվածի 2-րդ մասի դրույթները տարածվում են նաև բաժնետոմսերի գրավադրման և հետագայում դրանց իրացման նկատմամբ՝ սակայն պայմանով, որ գրավառուն իրավասու է պահպանել այդ բաժնետոմսերի նկատմամբ իր սեփականության իրավունքը՝ դրանք որևէ երրորդ անձի օտարելու փոխարեն:

the pledgee may reserve its title to such shares instead of alienating them to any third person.

**7.2.** Նախապատվության իրավունքները: Բաժնետերերից յուրաքանչյուրը և Վարկային կազմակերպությունն ունեն Առաջարկվող բաժնետոմսերը գնելու նախապատվության իրավունքներ Հայաստանի օրենսդրության համաձայն, հետնյալ կարգով.

ա) Իր բոլոր բաժնետոմսերը կամ դրանց մի մասը վաճառելու կամ այլ կերպ օտարելու մտադրություն ունեցող Բաժնետերը («Վաճառող բաժնետեր») տվյալ առաջարկի գնի, պայմանների և դրույթների մասին գրավոր ծանուցում է («Վաճառքի ծանուցագիր») մյուս Բաժնետերերին, որոնք իրենց բաժնետոմսերը չեն վաճառում («Չվաճառող բաժնետերեր»):

բ) Վաճառքի ծանուցագիրը ստանալուց հետո Չվաճառող բաժնետերերը և Վարկային կազմակերպությունը կարող են իրականացնել Վաճառող բաժնետիրոջից Առաջարկվող բաժնետոմսերն ամբողջությամբ կամ դրանց մի մասը ձեռք բերելու՝ իրենց նախապատվության իրավունքները («Նախապատվության իրավունք»): Եթե մեկից ավելի Չվաճառող բաժնետերեր ցանկանում են իրականացնել իրենց Նախապատվության իրավունքը, ապա նրանք կարող են համամասնությամբ (այսինքն, Չվաճառող բաժնետերերին արդեն պատկանող Բաժնետերերի թվաքանակին համամասնորեն) ձեռք

**7.3. Preemption Rights.**
Each of the Shareholders and the Credit Organization shall have preemption rights to purchase Offered Shares in accordance with the Armenian Law as well as in conformity with the following procedure:

a) the Shareholder willing to sell or otherwise transfer all or portion of his shares (the "Selling Shareholder") shall notify in writing (the "Sale Notice") other Shareholders which are not selling their shares (the "Non-Selling Shareholders") and the Credit Organization of a price, terms and conditions of such offer;

b) after they receive the Sale Notice, the Non-Selling Shareholders and the Credit Organization may exercise their preemption rights to purchase all or portion of the Offered Shares from the Selling Shareholder (the "Preemption Right"). If more than one Non-Selling Shareholder wish to exercise their Preemption Right, they can purshare shares offered for sale on a pro rata basis (in proportion to the number of Shares held by such Non-Selling Shareholders);

բերել վաճառքի համար առաջարկվող բաժնետոմսերը:

գ) Չվաճառող բաժնետերերը կարող են իրենց Նախապատվության իրավունքներն իրականացնել՝ Վաճառքի ծանուցագիրը ստանալուց հետո երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում («<u>Կատարման ժամկետ</u>») Վաճառող բաժնետիրոջը և Վարկային կազմակերպությանն ուղարկելով առաջարկի ընդունման գրավոր ծանուցում, որի մեջ պետք է նշված լինի, թե Առաջարկվող բաժնետոմսերից քանիսն է մտադիր ձեռք բերել Չվաճառող բաժնետերը («<u>Ընդունման ծանուցագիր</u>»):

c) the Non-Selling Shareholders may exercise their Preemption Rights by sending written notice of acceptance of such offer, stating the number of the Offered Shares that the Non-Selling Shareholder wishes to purchase (the "<u>Acceptance Notice</u>"), to the Selling Shareholder and the Credit Organization within thirty (30) calendar days after receipt of the Sale Notice (the "<u>Performance Period</u>");

դ) Եթե Չվաճառող բաժնետերերը հրաժարվում են իրենց նախապատվության իրավունքից կամ Կատարման ժամկետի ընթացքում Ընդունման ծանուցագիր չեն ներկայացնում Վաճառող բաժնետիրոջը, ապա Վաճառող բաժնետերը կարող է, նախապես ստանալով Չվաճառող բաժնետերերի համաձայնությունը, Առաջարկվող բաժնետոմսերը վաճառել կամ այլ կերպ օտարել երրորդ անձանց՝ վերջիններիս հետ համաձայնեցված պայմաններով, սակայն պայմանով, որ երրորդ անձին առաջարկվող գինը չպետք է ավելի ցածր լինի, քան Չվաճառող բաժնետերերին առաջարկված գինը, և որ գնորդը պետք է լինի վարկարժան, հասարակայնորեն պատասխանատու ներդրող, բարձր հեղինակությամբ, և Վարկային կազմակերպության ու վերջինիս հիմնադիրների առաքելությանը համահունչ սոցիալական նպատակներով:

d) if the Non-Selling Shareholders waive their preemption right or fail to furnish the Acceptance Notice to the Selling Shareholder within the Performance Period, the Selling Shareholder may sell or otherwise transfer the Offered Shares with prior approval of Non-Selling Shareholders to third persons on the terms as agreed with such third person; provided, that the offer price may not be less than such price offered to the Non-Selling Shareholders, and that the buyer is a creditworthy, socially responsible investor with a good reputation and like minded social objectives consistent with the mission of the founders and the Credit Organization.

Սույն հոդվածը չի տարածվում այն դեպքերի նկատմամբ, երբ բաժնետոմսերն օտարվում են Բաժնետիրոջից (1) որևէ փոխկապակցված անձի, որը Բաժնետիրոջ կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն հսկվող, և/կամ ուղղակիորեն կամ

This Article shall not apply to transfers of shares from a Shareholder to (1) an affiliated entity, such entity being an organization that is either directly or indirectly controlled and/or owned by a Shareholder ("<u>Affiliated Entity</u>") (2) a director, officer, or employee of a Shareholder, or (3) a director, officer, or employee of an Affiliated

անուղղակիորեն տվյալ Բաժնետիրոջը պատկանող կազմակերպություն է («Փոխկապակցված անձ»), (2) Բաժնետիրոջ տնօրենի, պաշտոնատար անձի կամ աշխատակցի, կամ (3) Փոխկապակցված անձի տնօրենի, պաշտոնատար անձի կամ աշխատակցի:

Entity.

## ՀՈԴՎԱԾ 8. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ARTICLE 8. SHAREHOLDERS OF THE CREDIT ORGANIZATION, THEIR RIGHTS AND OBLIGATIONS

**8.1.** Վարկային կազմակերպության բաժնետերերը:
Վարկային կազմակերպության Բաժնետերերն այն ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնք Հայաստանի օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ նախատեսված կարգով սեփականության իրավունքով ձեռք են բերել Վարկային կազմակերպության բաժնեմասեր:

**8.1. Shareholders of the Credit Organization.**
The Shareholders of the Credit Organization shall be individuals and legal entities having acquired shares of the Credit Organization by virtue of ownership rights in an order prescribed by the Armenian Law and this Charter.

Վարկային կազմակերպությունը պետք է ունենա ոչ ավելի, քան 49 Բաժնետեր: Եթե Բաժնետերերի թիվը 49-ից ավել է դարձել, ապա Վարկային կազմակերպությունը մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի բաց բաժնետիրական ընկերության կամ համապատասխանաբար կրճատի իր Բաժնետերերի թիվը: Հակառակ դեպքում Վարկային կազմակերպությունը ենթակա է լուծարման դատական կարգով:

The Credit Organization shall not have more than 49 Shareholders. If there are more than 49, the Credit Organization shall be reorganized into an open joint-stock company or the number of the Shareholders shall be reduced within one year. Otherwise the Credit Organization shall be liquidated by court.

**8.2.** Բաժնետերերի իրավունքները:
Վարկային կազմակերպության Բաժնետերերն ունեն հետևյալ իրավունքները.

**8.2. Shareholders' rights.**
Shareholders of the Credit Organization shall have the following rights:

ա) Սույն Կանոնադրությանը համապատասխան մասնակցել Վարկային կազմակերպության կառավարմանը,

a) to participate in management of the Credit Organization pursuant to this Charter;

բ) Անձամբ կամ լիազոր ներկայացուցչի միջոցով մասնակցել Վարկային կազմակերպության Բաժնետերերի ժողովին՝ վերջինիս ընթացքում

b) to participate in the Shareholders' Meeting of the Credit Organization in person or by proxy with the right to vote on all issues discussed during the meeting;

քննարկվող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,

գ) Ստանալ Բաժնետերերի ժողովների մասին գրավոր ծանուցում և այդ ժողովների համար առաջարկվող օրակարգը,

դ) Մասնակցել Վարկային կազմակերպության գործունեության կառավարմանը,

ե) Մասնակցել Վարկային կազմակերպության շահույթի բաշխմանը,

զ) Հայաստանի օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ նախատեսված կարգով իրականացնել նախապատվության իրավունք Վարկային կազմակերպության կողմից լրացուցիչ թողարկված բաժնետոմսերի և Բաժնետիրոջ/Բաժնետերերի կողմից վաճառքի համար առաջարկվող՝ Վարկային կազմակերպության բաժնետոմսերի նկատմամբ,

է) Առաջարկներ անել Վարկային կազմակերպության Բաժնետերերի ժողովի ընթացքում,

ը) Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված կարգով դիմել դատարան և բողոքարկել Բաժնետերերի ժողովի կամ Տնօրենների խորհրդի կողմից ընդունված որոշումները,

թ) Վարկային կազմակերպության լուծարման դեպքում ստանալ Վարկային կազմակերպության գույքի՝ տվյալ Բաժնետիրոջը պատկանող ամբողջությամբ վճարված սովորական բաժետոմսերի քանակին համապատասխանող մասը կամ արժեքը, պարտատերերի և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի հետ վերջնահաշվարկ կատարելուց հետո,

ժ) Ընտրել Վարկային կազմակերպության

c) to receive a written notification of the Shareholders' Meetings and the proposed agenda for such meetings;

d) to participate in the management of the activities of the Credit Organization;

e) to participate in the distribution of profits of the Credit Organization;

f) to exercise preemptive right with respect to shares additionally issued by the Credit Organization and shares of the Credit Organization offered for sale by other Shareholder/s in accordance with the Armenian Law and procedures specified in this Charter;

g) to make proposals at the Shareholders' Meeting of the Credit Organization;

h) to seek court protection and challenge decisions adopted by the Shareholders' Meeting or the Board of Directors according to the procedure prescribed by the Armenian Law;

i) should the Credit Organization be liquidated, to receive part of the property of the Credit Organization or its value corresponding to the number of fully paid-in common shares held by such Shareholder, after the settlement with the creditors and preferred shareholders;

j) to elect members and be elected a member of

ընտրովի մարմինների անդամների և ընտրվել որպես այս մարմինների անդամ,

elective bodies of the Credit Organization;

ժա) Վարկային կազմակերպության բարձրագույն և այլ մարմինների քննարկմանը ներկայացնել առաջարկներ,

k) to submit proposals for discussion by the supreme and other bodies of the Credit Organization;

ժբ) Ստանալ տեղեկություններ Վարկային կազմակերպության գործունեության մասին, այդ թվում՝ վերջինիս աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները, ծանոթանալ Վերստուգողի, Տնօրենների խորհրդի Աուդիտի հանձնաժողովի (եթե այդպիսին ստեղծվում է) և արտաքին աուդիտորի հաշվետվություններին, հաշվապահական հաշվառման տեղեկություններին և Հայաստանի օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ փաստաթղթերի:

l) to receive information on the activities of the Credit Organization including its audited financial statements, have access to reports of the Controller, the Audit Committee of the Board of Directors, if such is created, and External Auditor, accounting information, and other documentation as provided for under Armenian Law and this Charter.

Բաժնետերերի՝ այստեղ նշված իրավունքների ցանկը սպառիչ չէ: Բաժնետերերը կարող են իրականացնել նաև Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

The rights of the Shareholders stated herein are not exhaustive. Shareholders may exercise other rights as provided by the Armenian Law.

**8.3.** Բաժնետերերի պարտականությունները:
Վարկային կազմակերպության Բաժնետերերը պարտավոր են.

**8.3. Shareholders' obligations:**
Shareholders of the Credit Organization shall:

ա) Աջակցել Վարկային կազմակերպության գործունեությանը,

a) support the activities of the Credit Organization;

բ) Կատարել սույն Կանոնադրության և Բաժնետերերի ժողովի որոշումների պահանջները,

b) comply with the provisions of this Charter and decisions of the Shareholders' Meeting;

գ) Կատարել Վարկային կազմակերպության նկատմամբ ունեցած իր բոլոր պարտավորությունները, այդ թվում՝ գույքային մասնակցության հետ կապված պարտավորությունները, ինչպես նաև վճարել բաժնետոմսերի

c) execute all obligations to the Credit Organization, including those, connected with property participation, as well as pay the value of shares at the rate, in the order and manner as determined by the this Charter and decision of the Shareholders' Meeting;

արժեքը սույն Կանոնադրությամբ և Բաժնետերերի ժողովի որոշմամբ սահմանված չափով, կարգով և եղանակով,

դ) Կատարել Վարկային կազմակերպության հետ կնքված բոլոր առանձին պայմանագրերով նախատեսված բոլոր պարտավորությունները՝ այդ պայմանագրերի դրույթներին և պայմաններին համապատասխան,

d) perform all obligations under any separate agreements entered into with the Credit Organization subject to the terms and conditions of such agreements;

ե) Վարկային կազմակերպությանը ծանուցել բաժնետոմսերի ցանկացած օտարման կամ գրավադրման, կամ հասցեի ցանկացած փոփոխության մասին,

e) notify the Credit Organization of any transfer or pledges of shares or any changes of address.

զ) Չհրապարակել որևէ Գաղտնի տեղեկություններ՝ սույնով նախատեսված իմաստով:

f) not disclose any Confidential Information, as defined herein.

Վարկային կազմակերպության Բաժնետերերը կարող են ունենալ Հայաստանի օրենսդրությամբ և Վարկային կազմակերպության Բաժնետերերի ժողովի կողմից սասհմանված այլ պարտավորություններ:

Shareholders of the Credit Organization may have other obligations prescribed by Armenian Law and the Shareholders' Meeting of the Credit Organization.

**8.4.** Նշանակալից մասնակցությունը Վարկային կազմակերպության Կանոնադրական կապիտալում:

Անձն առանձին կամ իր հետ փոխկապակցված այլ անձանց հետ միասին իրավասու է մեկ կամ մի քանի գործարքների արդյունքում Վարկային կազմակերպության Կանոնադրական կապիտալում ձեռք բերել նշանակալից մասնակցություն, որը գերազանցում է Վարկային կազմակերպության քվեարկող բաժնետոմսերի 10%-ը, միայն նախապես այդ նպատակով ստանալով ՀՀ ԿԲ-ի համաձայնությունը:

**8.4. Significant Participation in the Charter Capital of the Credit Organization.**

A person individually or together with other persons related to him/her may, as a result of one or more transactions, acquire a significant participation in the Charter Capital of the Credit Organization that is more than 10% of voting shares of the Credit Organization only with the prior consent of the CBA.

## ՀՈԴՎԱԾ 9.
## ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ: ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐ:

## ARTICLE 9.
## ALLOCATION OF PROFITS. DIVIDENDS.

**9.1.** Շահութաբաժիններ:

Զուտ շահույթը, որը մնում է բոլոր հարկերը վճարելուց և շահույթը ստանալու համար անհրաժեշտորեն կատարված այլ ծախսերը կրելուց հետո, հանդիսանում է Վարկային կազմակերպության սեփականությունը, որը Բաժնետերերի ժողովի որոշմամբ շահութաբաժինների տեսքով բաշխվում է Բաժնետերերի միջև, բացառությամբ երբ Բաժնետերերի ժողովը որոշում է այդ շահույթը վերներդնել այլ գործունեության կամ ծրագրերի մեջ:

Շահութաբաժինները հայտարարվում և վճարվում են եռամսյակը, կիսամյակը (միջանկյալ) կամ տարին մեկ անգամ՝ սույն Կանոնադրության և Հայաստանի օրենսդրության համաձայն: Վարկային կազմակերպության կողմից վճարման ենթակա բոլոր շահութաբաժինները բաշխվում են Բաժնետերերի միջև վերջիններիս պատկանող Բաժնետոմսերի քանակին համամասն: Շահութաբաժիններ վճարելու, դրանց չափի և վճարման ձևի մասին որոշումը Տնօրենների խորհրդի ներկայացմամբ կայացվում է Բաժնետերերի ժողովի կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

Շահութաբաժինները վճարվում են կանխիկով, եթե Բաժնետերերի որոշմամբ ուղղակիորեն այլ բան չի նախատեսվում: Շահութաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է Բաժնետերերի որոշմամբ: Օտարերկրացի Բաժնետերերն իրավունք ունեն շահութաբաժինները վերահայրենականացնել ազատ փոխարկելի արժույթով, առանց որևէ սահմանափակումների, Հայաստանի օրենսդրության համաձայն:

**9.1. Dividends.**

The net profit which is left over after the payment of all taxes and other necessary expenses made in receipt of the profit is the property of the Credit Organization which by a decision of the Shareholders' Meeting shall be distributed as dividends among the Shareholders unless the Shareholders Meeting decides to reinvest such profit into other activities or ventures.

Dividends may be declared and paid quarterly, semi-annually (interim) or annually in accordance with the provisions of this Charter and the Armenian Law. All dividends payable by the Credit Organization shall be distributed among Shareholders in proportion to the number of Shares held by such Shareholders. A decision on payment of dividends, their size and form of payment, shall be made by the Shareholders' Meeting by a majority vote upon the recommendation of the Board of Directors.

Dividends shall be paid in cash unless otherwise specified by resolution of the Shareholders.The date of payment of dividends shall be set in the resolution of the Shareholders. Foreign Shareholders shall have the right to repatriate dividends in freely convertible currency without any restrictions in accordance with Armenian Law.

**9.2.** Շահութաբաժինների չվճարումը:

Վարկային կազմակերպությունն իրավունք չունի հայտարարել և վճարել շահութաբաժիններ, եթե շահութաբաժինների վճարումից անմիջապես հետո.

ա) Վարկային կազմակերպությունն ի վիճակի չի լինի բավարարել իր պարտավորությունները, որոնք կծագեն

**9.2. Non-Payment of Dividends.**

The Credit Organization may not declare and pay dividends if immediately after the payment of dividends:

a) the Credit Organization will not be able to satisfy its liabilities as they become due in the ordinary course of business;

Վարկային կազմակերպության սովորական գործարար գործունեության ընթացքում,

բ) Վարկային կազմակերպության Կանոնադրական կապիտալը լրիվ չի վճարվել,

գ) Վարկային կազմակերպությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը՝ Օրենքի 58-րդ հոդվածի համաձայն,

դ) Շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Վարկային կազմակերպության վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով, և

ե) Վարկային կազմակերպության զուտ ակտիվների արժեքը պակաս է Կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

b) the Credit Organization's Charter Capital has not been paid up;

c) the Credit Organization has not bought back all the shares under the provision of Article 58 of the Law;

d) as of the time of adopting a decision on payment of dividends, the condition of the Credit Organization is consistent with the insolvency (bankruptcy) criteria stipulated by law, or the Credit Organization will become insolvent (bankrupt) due to the payment of dividends; and

e) the Credit Organization's net assets are less than its charter capital, or they will become less as a result of dividend payment.

## ՀՈԴՎԱԾ 10.
## ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

**10.1.** Վարկային կազմակերպությունն ունի կառավարման հետևյալ կառուցվածքը.

ա) Բաժնետերերի ժողով,
բ) Տնօրենների խորհուրդ,
գ) Վարչություն,
դ) Գլխավոր տնօրեն:

Վարկային կազմակերպության Բաժնետերերի ժողովը Վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է: Վարկային կազմակերպության Տնօրենների խորհուրդն ընտրվում է Բաժնետերերի որոշմամբ՝ սույն Կանոնադրությանը համապատասխան: Վարչությունը և Գլխավոր տնօրենը կառավարում են Վարկային

## ARTICLE 10.
## MANAGEMENT OF THE CREDIT ORGANIZATION

**10.2.** The Credit Organization shall have the following management structure:

a) Shareholders' Meeting
b) Board of Directors
c) Executive Board;
d) General Director.

The highest managing body of the Credit Organization shall be the Shareholders' Meeting of the Credit Organization. The Board of Directors of the Credit Organization shall be elected by resolution of the Shareholders in accordance with this Charter. The Executive Board and the General Director shall manage the day-to-day operations of the Credit Organization.

կազմակերպության առօրյա գործունեությունը:

## ՀՈԴՎԱԾ 11. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Բաժնետերերի ժողովը («Ժողով») Վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է: Բոլոր Բաժնետերերն իրավասու են մասնակցել Բաժնետերերի ժողովին: Տնօրենների խորհրդի և Վարչության անդամները կարող են Բաժնետերերի հրավերով մասնակցել Ժողովին և ելույթներ ունենալ Ժողովի ընթացքում:

**11.1.** Բաժնետերերի տարեկան ժողովը: Բաժնետերերի ժողովը կարող է լինել երկու տեսակի՝ տարեկան և արտահերթ: Բաժնետերերի տարեկան ժողովը գումարվում է տարին մեկ անգամ՝ նախքան հուլիսի 1-ը: Ժողովի կոնկրետ ամսաթիվը, ժամը և վայրը նշանակվում են Տնօրենների խորհրդի որոշմամբ: Վարկային կազմակերպության Բաժնետոմսերի առաջին տարեկան ժողովը գումարվում է գործունեության առաջին ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

**11.2.** Բաժնետերերի արտահերթ ժողովը: Բաժնետերերի արտահերթ ժողովը գումարվում է Տնօրենների խորհրդի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, կամ Վերստուգողի կամ Տնօրենների խորհրդի Աուդիտի հանձնաժողովի (եթե այդպիսին ստեղծվում է) պահանջով, եթե դա են պահանջում Վարկային կազմակերպության շահերը: Քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10%-ի տեր Բաժնետերը/Բաժնետերերն իրավասու են պահանջել, որպեսզի հրավիրվի Արտահերթ ժողով: Արտահերթ ժողով անցկացնելու պահանջը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում Վարկային կազմակերպության Տնօրենների խորհուրդը պարտավոր է որոշում կայացնել այդ ժողովն անցկացնելու կամ դրա անցկացումը մերժելու մասին: Վարկային կազմակերպության Տնօրենների

## ARTICLE 11. THE SHAREHOLDERS' MEETING

The Shareholders' Meeting (the "Meeting") is the supreme governing body of the Credit Organization. All Shareholders may participate in the Shareholders' Meeting. Members of the Board of Directors and Executive Board may participate and take the floor at the invitation of the Shareholders.

**11.1. Annual Shareholders' Meeting.**
Shareholders' Meeting may be of two types: annual and extraordinary. The Annual Shareholders' Meeting shall be convened once a year prior to July 1. The exact date, time and place of the Meeting shall be fixed by the Board of Directors. The first Annual Shareholders' Meeting of the Credit Organization shall be convened within six months after the end of the first financial year.

**11.2. Extraordinary Shareholders' Meeting.**
The Extraordinary Shareholders' Meetings shall be convened by the Board of Directors on its own initiative or upon a request of the Controller or Audit committee of the Board of Directors, if such is created, if the interests of the Credit Organization require so. The Shareholder(s) owning at least 10% of the voting shares shall have the right to request calling the Extraordinary Meeting. Within 10 days after the receipt of the request to hold an Extraordinary Meeting the Board of Directors of the Credit Organization shall make decision on holding or on refusing to hold such a meeting. The Board of Directors of the Credit Organization shall have the right to refuse the request on holding an Extraordinary Meeting only in the cases prescribed by the Law. The order of holding an Extraordinary Meeting shall be determined by the Board of Directors of the Credit Organization in accordance with the Armenian Law.
In the event the Board of Directors of the Credit

խորհուրդն իրավասու է մերժել Արտահերթ ժողովի անցկացման պահանջը միայն Օրենքով նախատեսված դեպքերում: Արտահերթ ժողով անցկացնելու կարգը որոշվում է Վարկային կազմակերպության Տնօրենների խորհրդի կողմից Հայաստանի օրենսդրությանը համապատասխան:
Եթե Վարկային կազմակերպության Տնօրենների խորհուրդը սույնով նախատեսված ժամկետում որոշում չի կայացնում Արտահերթ ժողով անցկացնելու մասին, կամ որոշում է կայացնում ժողովի անցկացումը մերժելու մասին, ապա Արտահերթ ժողով կարող է անցկացվել պահանջը ներկայացրած անձի/անձանց կողմից՝ Վարկային կազմակերպության հաշվին:

Organization does not make a decision on holding an Extraordinary Meeting within the period specified herein or makes a decision on refusing to hold a Meeting, the Extraordinary Meeting may be held by the person/persons having submitted the request at the expense of the Credit Organization.

**11.3.** Բաժնետերերի ցուցակը:
Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բաժնետերերի ցուցակը կազմվում է Վարկային կազմակերպության Տնօրենների խորհրդի կողմից որոշված ամսաթվով՝ Բաժնետերերի ռեեստրում առկա տվյալների համաձայն:

**11.3. Shareholders' list.**
The list of the Shareholders having the right to participate in the Meeting shall be made as of the date determined by the Board of Directors of the Credit Organization in accordance with the data provided in the Shareholders Register.

**11.4.** Ժողովի մասին ծանուցումը:
Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր Բաժնետերերին տրվում է գրավոր ծանուցում Բաժնետերերի ժողովի մասին ֆաքսիմիլով, ֆաքսով, փոստով, սուրհանդակի կամ էլեկտրոնային փոստի միջոցով՝ պայմանով, որ այդ էլեկտրոնային փոստի ստացումը հավաստված լինի ստացողի կողմից: Բաժնետերերի տարեկան ժողովի մասին ծանուցումը պետք է տրվի ժողովի օրվանից առնվազն 10 օր առաջ: Բաժնետերերի արտահերթ ժողովի մասին ծանուցումը տրվում է Բաժնետերերին աղջամտորեն հնարավորին չափ շուտ: Ծանուցումը պետք է ներառի ժողովի անցկացման ամսաթիվը, վայրը և առաջարկվող օրակարգը:

**11.4. Notice of the Meeting.**
Written notice of the Shareholders' Meeting shall be provided to all Shareholders entitled to attend the Meeting by facsimile, fax, mail, courier or electronic mail provided that receipt of such electronic mail is confirmed by the recipient. The notice of the Annual Sharheolders' Meeting shall be provided not later than 10 days in advance of the date of the Meeting; the notice of the Extraordinary Shareholders' Meeting shall be provided to the Shareholders as far in advince as reasonably possible. The notice shall include the date and place of the Meeting and its proposed agenda.

**11.5.** Օրակարգը:
Բաժնետերերի ժողովը չի կարող որոշումներ կայացնել ժողովի օրակարգում չներառված հարցերի վերաբերյալ: Ժողովի օրակարգը հաստատվում է Խորհրդի կողմից՝ հաշվի

**11.5. Agenda.**
The Shareholders' Meeting shall not make decisions on the issues not included in the Meeting agenda. The agenda of the Meeting shall be approved by the Board, taking into consideration the propositions made by different Shareholders in

առնելով Օրենքով սահմանված կարգով տարբեր Բաժնետերերի արած առաջարկությունները:
Վարկային կազմակերպության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի տեր ցանկացած Բաժնետեր իրավասու է ներկայացնել իր առաջարկությունները Բաժնետերերի ժողովի օրակարգի մասին, ինչպես նաև առաջադրել Տնօրենների խորհրդի անդամության և Վերստուգողի թեկնածություններ Ժողովի գումարից ոչ ուշ, քան 30 օր առաջ: Տնօրենների խորհուրդը Հայաստանի օրենսդրության համաձայն քննարկում և որոշում է, թե արդյոք առաջարկությունները պետք է ներառվեն օրակարգի, կամ առաջադրումները՝ թեկնածուների ցանկի մեջ:

the order prescribed by the Law.
Any Shareholder who owns at least 2 percent of the voting shares of the Credit Organization shall have the right to submit his/her proposals to the agenda of the Shareholders' Meeting as well as propose candidates for the members of the Board of Directors and the Controller position not later than 30 days prior to the Meeting convocation. The Board of Directors shall discuss and decide in accordance with the Armenian Law whether it will or will not incorporate the proposals in the agenda or the list of candidates.

**11.6.** Ներկայացուցիչը:
Եթե Բաժնետերը մտադիր չէ մասնակցել Բաժնետերերի ժողովին, ապա նա կարող է գրավոր լիազորել մեկ այլ Բաժնետիրոջ կամ որևէ երրորդ անձի՝ Բաժնետերերի ժողովում հանդես գալու որպես Բաժնետիրոջ ներկայացուցիչ և քվեարկելու այդ Բաժնետիրոջ անունից:

**11.6. Proxy.**
If a Shareholder does not plan to participate in a Shareholders' Meeting, such Shareholder may issue a written proxy to another Shareholder or a third person to be the Shareholder's representative at the Shareholders' Meeting and to vote on the Shareholder's behalf.

**11.7.** Քվորում:
Ժողովն իրավասու է որոշումներ կայացնել (առկա է քվորում), եթե Ժողովին մասնակցում են Վարկային կազմակերպության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Վարկային կազմակերպության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին: Եթե Վարկային կազմակերպության Ժողովը տևում է մեկ օրից ավելի, ապա յուրաքանչյուր օրվա համար կազմվում են Ժողովի մասնակիցների առանձին ցուցակներ:
Եթե Վարկային կազմակերպությունն ունի միայն մեկ Բաժնետեր, ապա Բաժնետերերի ժողովի իրավասությանը վերապահված խնդիրների վերաբերյալ որոշումները կայացվում են այդ՝ միակ Բաժնետիրոջ կողմից, գրավոր, առանց Ժողով հրավիրելու և այդ մասին ծանուցելու:

**11.7. Quorum.**
The Meeting is competent to transact business (the quorum is available) if Shareholders (their representatives) representing more than 50% of the voting shares of the Credit Organization are participating in the Meeting. Separate lists of the participants of the Meeting shall be prepared should the Meeting of the Credit Organization last more than one day.
In the event that the Credit Organization has a sole Shareholder, decisions on the matters within the competence of the Shareholders' Meeting shall be made by the sole Shareholder in writing, without calling a Meeting and providing a notice thereof.

**11.8. Բաժնետերերի ժողովի իրավասությունները:**
Բաժնետերերի ժողովի իրավասությանն են պատկանում.

**11.8. Competence of the Shareholders' Meeting.**
The Shareholders' Meeting has competence to:

ա) Վարկային կազմակերպության Կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,

a) approve the Charter of the Credit Organization, approve revised and restated Charter;

բ) Վարկային կազմակերպության վերակազմակերպման մասին որոշումներ կայացնելը,

b) make decisions on the reorganization of the Credit Organization;

գ) Վարկային կազմակերպության լուծարման մասին որոշումներ կայացնելը, լուծարման հանձնաժողով նշանակելը, լուծարման պլանի, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,

c) make decisions on the liquidation of the Credit Organization, appoint a liquidation commission, approve the liquidation plan, the final, interim, and liquidation balance sheets;

դ) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

d) determine the number of the Board members, elect them, and terminate their powers prior to the expiration of their term;

ե) Թողարկված բաժնետոմսերի առավելագույն քանակի որոշումը,

e) determine the maximum number of issued shares;

զ) Հայտարարված բաժնետոմսերի քանակի, անվանական արժեքի, տեսակների, և այդ բաժնետոմսերի սեփականատերերին վերապահված իրավունքների որոշումը,

f) determine the number, nominal value, type of the authorized shares and the rights vested in these shares;

է) Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով Վարկային կազմակերպության Կանոնադրական կապիտալի ավելացումը,

g) increase the Charter Capital of the Credit Organization by increasing the nominal value of shares or issuing additional shares;

ը) Վարկային կազմակերպության բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, ընդհանուր քանակի կրճատման նպատակով Վարկային կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի

h) decrease the Charter Capital of the Credit Organization by decreasing the nominal value of shares, by purchasing by the Credit Organization part of the shares in order to decrease their total number, and subsequent cancellation of the shares purchased by the Credit Organization;

ձեռքբերման, ինչպես նաև Վարկային կազմակերպության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

թ) Վարկային կազմակերպության Վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

i) elect and remove the Controller;

ժ) Վարկային կազմակերպության Գլխավոր տնօրենի և Վարչության անդամների վարձատրության չափի և պայմանների որոշումը,

j) determine the terms and conditions of remuneration and compensation for the General Director and members of the Executive Board of the Credit Organization;

ժա) Արտաքին աուդիտորի հաստատումը,

k) approve the external auditor;

ժբ) Վարկային կազմակերպության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը, Վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության տարեկան արդյունքների հաստատումը,

l) approve annual reports, accounting balance sheets, allocation of profits and losses of the Credit Organization, adopt decisions on payment of dividends and define the size thereof, approve annual results of the operations of the branch and representative offices of the Credit Organization;

ժգ) Բաժնետերերի ժողովի անցկացման կարգի որոշումը,

m) determine procedures for holding the Shareholders' Meeting;

ժդ) Տնօրենների խորհրդի ներկայացմամբ՝ առաջին եռամսյակի, կիսամյակի, ֆինանսական տարվա առաջին ինը ամիսների արդյունքների հիման վրա շահութաբաժինների վճարման մասին որոշման կայացումը, ինչպես նաև դրանց գումարի, վճարման ձևի և ամսաթվի որոշումը,

n) upon recommendation of the Board of Directors decide on dividends payment upon the results of first quarter, half year, nine months of the financial year, as well as their amount, form and date of payment;

ժե) Օրենքով սահմանված կարգով խոշոր գործարքների կնքման թույլատրումը,

o) authorize the conclusion of large-scale transactions and related party transactions as provided by the Law;

ժզ) Օրենքով սահմանված դեպքերում Վարկային կազմակերպության թողարկած բաժնետոմսերի ձեռքբերման թույլատրումը,

ժէ) Տնօրենների խորհրդի ներկայացմամբ՝ բաժնետոմսերի համախմբման կամ բաժանման մասին որոշումը,

ժը) Վարկային կազմակերպության Վարչության կազմի հաստատումը,

ժթ) Հայաստանի օրենսդրությամբ Ժողովին վերապահված այլ իրավասությունների իրականացումը:

**11.9.** Քվեարկությունը:
Քվեարկությունը Բաժնետերերի ժողովում իրականացվում է «մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով: Բաժնետերերի ժողովի որոշումները, բացառությամբ Հայաստանի օրենսդրությամբ կամ սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերի, կայացվում են Բաժնետերերի ժողովին մասնակցող Բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ:
Վերոհիշյալ «ա», «բ», «ե» և «ժե» կետերով նախատեսված որոշումները կայացվում են Ժողովին մասնակցող Բաժնետերերի ձայների ¾-ի (երեք քառորդի) մեծամասնությամբ:
Վարկային կազմակերպության լուծարման և Վարկային կազմակերպության Կանոնադրական կապիտալի նվազեցման մասին որոշումները ցանկացած պարագայում պետք է ընդունվեն Ժողովին մասնակցող Բաժնետերերի ձայների ¾-ի (երեք քառորդի) մեծամասնությամբ, որը, սակայն, չպետք է պակաս լինի Վարկային կազմակերպության բոլոր քվեարկող բաժնետոմսերի 2/3-ից (երկու երրորդից):

**11.10.** Բաժնետերերի որոշումների կայացումն առանց ժողով անցկացնելու:
Բաժնետերերի ժողովի որոշումներ կարող են կայացվել առանց ժողով (օրակարգը քննարկելու և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով բաժնետերերի

p) authorize purchase of issued shares by the Credit Organization in cases provided by the Law;

q) upon recommendation of the Board of Directors decide on split or consolidation of shares;

r) determine composition of the Executive Board of the Credit Organization;

s) exercise other powers granted to the Meeting by the Armenian Law.

**11.9. Voting.**
Voting at the Shareholders' Meeting is based on the principle "one share – one vote". Resolutions of the Shareholders' Meeting are, except as otherwise provided by the Armenian Law or this Charter, passed by a simple majority of votes belonging to the Shareholders attending the Shareholders' Meeting.
Resolutions referred to in Clauses a, b, e and o above, shall be passed by the majority of ¾ (three fourths) of votes of the Shareholders participating in the Meeting.
Decisions on liquidation of the Credit Organization and decreasing the Charter Capital of the Credit Organization by any means shall be passed by the majority of ¾ (three fourths) of votes of the Shareholders participating in the Meeting, but not less than 2/3 (two thirds) of all voting shares of the Credit Organization.

**11.10. Shareholder resolutions without holding a meeting.**
Resolutions of the Shareholders' Meeting may be made without holding a meeting (joint session of shareholders for discussion of agenda and resolving issues put to vote) through a remote voting. Decisions adopted by means of a remote vote shall have legal effect if more than 50% of the

համատեղ հանդիպում) անցկացնելու առանց նախնական ծանուցման՝ հեռակա քվեարկությամբ: Հեռակա քվեարկությամբ կայացված որոշումներն իրավական ուժ ունեն, եթե քվեարկությանը մասնակցել են քվեարկող բաժնետոմսերի տերերի 50%-ից ավելին: Հեռակա կարգով քվեարկության ժամանակ հեռակա կարգով կայացվող որոշման նախագիծը ներկայացվում է բաժնետերերին և իրավական ուժ ստանում որոշման ստորագրման օրը կամ որոշմամբ սահմանված ավելի ուշ ժամկետում:Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն առնվազն 30 օր առաջ:

owners of the voting shares participated in the vote. In a remote voting the draft resolution of the Shareholders' Meeting shall be provided to the shareholders and will take effect from the moment of signature or later as foreseen by the resolution. In a remote voting the voting ballots shall be provided to the shareholders at least 30 days in advance.

**11.11.** Արձանագրությունը և քվեարկության արդյունքները:

Բաժնետերերի ժողովը նախագահում է Տնօրենների խորհրդի Նախագահը, իսկ վերջինիս կողմից ժողովը նախագահելու անհնարինության դեպքում՝ այդ նպատակով Բաժնետերերի ժողովի կողմից նշանակված անձը: Աուդիտի հանձնաժողովի այն անդամները, Վերստուգողը և Տնօրենների խորհրդի այն անդամները, որոնք Բաժնետերեր չեն, Գլխավոր տնօրենը, Գլխավոր տնօրենի տեղակալը և Վարչության այլ անդամները կարող են Բաժնետերերի պահանջով մասնակցել Ժողովին:

Բաժնետերերի ժողովի արձանագրությունը կազմվում է Ժողովի ավարտից հետո 5 օրվա ընթացքում՝ առնվազն երկու բնօրինակով, որոնք ստորագրում են Ժողովի նախագահը և քարտուղարը: Արձանագրության մեջ պետք է նշված լինի Ժողովի գումարման ամսաթիվը և վայրը, քվեարկող բաժնետոմսերի տեր բոլոր Բաժնետերերի ձայների ընդհանուր քանակը, Ժողովին մասնակցած բոլոր Բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը, Ժողովի նախագահը և քարտուղարը, Ժողովի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները և Ժողովի ընդունած որոշումները:

Բաժնետերերի ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները,

**11.11. Minutes and voting results.**

The Shareholders' Meeting shall be chaired by the Chairman of the Board of Directors; failing him, the person appointed by the Shareholders' Meeting. Members of the Audit Committee, Controller as well as the members of the Board of Directors who are not Shareholders, the General Director, the deputy general director and other members of the Executive Board may participate in the Meeting at the request of the Shareholders.

The minutes of the Shareholders' Meeting shall be prepared within 5 days after the Meeting is closed at least in two original copies and shall be signed by the chairman and the secretary of the Meeting. The minutes must record the place and time of the Meeting, the total number of votes held by all Shareholders who own the voting shares, the number of votes held by all Shareholders participating in the Meeting, the chairman and secretary of the Meeting, the agenda, the principal topics addressed in the speeches, the issues put to the vote and the voting results, and the resolutions adopted by the Meeting.

Information regarding the decisions adopted by the Shareholders' Meeting as well as voting results shall be provided to the Shareholders of the Credit Organization within 45 days after adoption of those decisons.

ինչպես նաև քվեարկության արդյունքները տրամադրվում են Վարկային կազմակերպության Բաժնետերերին այդ որոշումների ընդունումից հետո 45 օրվա ընթացքում:

## ՀՈԴՎԱԾ 12.
## ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

**12.1.** Տնօրենների խորհուրդը:
Տնօրենների խորհուրդը («Խորհուրդ») իրականացնում է Վարկային կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք վերապահված են Ժողովի բացառիկ իրավասությանը, կամ սույն Կանոնադրության համաձայն կամ Տնօրենների խորհրդի որոշմամբ պատվիրակված են Վարչությանը կամ Վարչության նախագահին:
Խորհրդի անդամները պետք է համապատասխան ՀՀ կենտրոնական բանկի սահմանած որակավորման և արհեստավարժության պահանջներին:

**12.2.** Խորհրդի ընտրությունը:
Խորհուրդը բաղկացած է չորս անդամներից, որոնք ընտրվում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, եթե սույն Կանոնադրությամբ այլ կերպ նախատեսված չէ, Ժողովի մասնակից Բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, անորոշ ժամկետով: Խորհրդի իրավասությունները դադարում են այն ժամանակ, երբ Բաժնետերերի տարեկան ժողովի կողմից կատարվում է խորհրդի կազմի փոփոխություն:Վարկային կազմակերպության Գլխավոր տնօրենը և Վարչության անդամները չեն կարող լինել Խորհրդի անդամներ: Խորհրդի ցանկացած անդամ կարող է Բաժնետերերի ժողովի որոշմամբ հեռացվել Խորհրդի կազմից՝ որոշակի պատճառով կամ առանց որևէ պատճառի: Խորհրդի ցանկացած անդամ կարող է ցանկացած ժամանակ դուրս գալ Խորհրդի կազմից՝ նախապես այդ մասին գրավոր ծանուցելով Խորհրդի նախագահին: Անդամի վաղաժամկետ հեռացման կամ հրաժարականի դեպքում Խորհրդում

## ARTICLE 12.
## BOARD OF DIRECTORS

**12.1. Board of Directors.**
The Board of Directors (the "Board") implements the general management of the activities of the Credit Organization except for the matters that are within the exclusive competence of the Meeting or matters delegated to the Executive Board and the Chairman of the Executive Board pursuant to this Charter or decisions of the Board of Directors.
Members of the Board shall meet the qualifications and professional requirements determined by the CBA.

**12.2. Election of the Board.**
The Board shall consist of four members elected by the Annual Shareholders' Meeting, unless otherwise specified in this Charter, by a majority vote of the Shareholders participating in the Meeting for indefinite term. The rights of the Board terminate when the Annual Shareholders' Meeting elects new Board members. General Director and members of the Executive Board of the Credit Organization can not be members of the Board of Directors.

. Any Board member may be removed from the Board with or without cause by the decision of the Shareholders' Meeting. Any Board member may resign from the Board at any time by providing a prior written notice to the Chairman of the Board. All vacancies in the Board due to early removal or resignation of the member/s shall be filled in by the Shareholders' Meeting. Notwithstanding any vacancy on the Board, as long as a quorum of the Board, as defined herein, remains in office, the Board is competent to exercise all and any of its powers.
Shareholders of the Credit Organization owning 10% or more of the voting shares as of the date of the preparation of the Shareholders' list shall have

առաջացող բոլոր թափուր տեղերը լրացվում են Բաժնետերերի ժողովի կողմից: Անկախ Խորհրդում թափուր տեղերի առկայությունից, Խորհուրդն իրավասու է իրականացնել իր ցանկացած իրավասություն, եթե շարունակում է պաշտոնավարել Խորհրդի քվորում ապահովող անդամների քանակություն՝ սույնով նախատեսված իմաստով: Բաժնետերերի ցուցակի կազմման օրվա դրությամբ Վարկային կազմակերպության քվեարկող բաժնետոմսերի 10%-ի կամ ավելի մեծ մասի տեր բաժնետերերն իրավասու են Խորհրդի մեկ անդամի նշանակել առանց ընտրության:

the right to appoint one member of the Board without election.

**12.3.** Խորհրդի իրավասությունները:
Խորհուրդն իրավասու է.

**12.3. Board Functions.**
The Board shall have the following functions:

ա) Որոշել Վարկային կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները,

a) determine the main areas of Credit Organization activities;

բ) Վերահսկել Վարկային կազմակերպության ղեկավար մարմինների գործունեությունը,

b) supervise the activities of the management of the Credit Organization;

գ) Հաստատել Վարկային կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը,

c) approve the internal organizational structure of the Credit Organization;

դ) Գումարել տարեկան և արտահերթ Ժողովներ, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի,

d) assemble annual and special Meetings, except for cases specified in the Law;

ե) Հաստատել Ժողովների օրակարգը,

e) approve the Meeting agenda;

զ) Հաստատել Ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթիվը, ինչպես նաև լուծել բոլոր այն հարցերը, որոնք կապված են Ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Խորհրդի իրավասությանն Օրենքի դրույթներին համապատասխան,

f) approve the date of preparing the list of shareholders eligible to participate in the Meeting, and resolve all those issues related to the preparation and implementation of the Meeting, which the Board is authorized to resolve according to the provisions of the Law;

է) Օրենքի համաձայն առաջարկություններ ներկայացնել Ժողովների քննարկմանը,

g) present recommendations to the Meeting in accordance with the Law;

ը) Օրենքով սահմանված կարգով որոշել գույքի շուկայական արժեքը,

h) determine the market price of property in the manner stipulated in the Law;

թ) Վարկային կազմակերպության Վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ առաջարկություններ նախապատրաստել Ժողովի համար,

i) prepare recommendations to the Meeting regarding the procedure and conditions of remuneration and compensation to the Credit Organization's Controller;

ժ) Սահմանել Վարկային կազմակերպության Արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափը,

j) determine the amount of payment to the External Auditor of the Credit Organization;

ժա) Միջանկյալ և տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ժողովին ներկայացվելիք առաջարկություններ նախապատրաստել,

k) prepare recommendations to the Meeting regarding the size and payment procedure of interim and annual dividends;

ժբ) Օգտագործել Վարկային կազմակերպության պահուստային և այլ հիմնադրամները,

l) utilize the Credit Organization's reserve fund and other funds;

ժգ) Հաստատել կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթեր և այլ ներքին կանոնակարգեր,

m) approve internal documents regulating the activities of management bodies and other internal regulations;

ժդ) Հաստատել Վարկային կազմակերպության ամենամյա ծախսերի նախահաշիվը և գործարար ծրագիրը,

n) approve annual budget and business plan of the Credit Organization;

ժե) Որոշումներ կայացնել Վարկային կազմակերպության տեղաբաշխված բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր ձեռք բերելու վերաբերյալ,

o) decide on acquiring outstanding shares, bonds and other securities of the Credit Organization;

ժզ) Նշանակել Վարկային կազմակերպության Գլխավոր տնօրենի և Վարչության այլ անդամների, վաղաժամկետ դադարեցնել նրանց իրավասությունները,

p) appoint General Director and other members of the Executive Board of the Credit Organization, terminate their powers prior to the expiration of their terms;

ժէ) Որոշում կայացնել դուստր ընկերությունների ստեղծման, դրանց կանոնադրական կապիտալում Վարկային կազմակերպության

q) make decision on creating a subsidiary and on the size of participation of the Credit Organization in its charter capital unless such participation is considered a large-scale

մասնակցության չափի մասին, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում, որը ենթակա է հաստատման Բաժնետերերի ժողովի կողմից՝ Օրենքով սահմանված կարգով,

transaction which is subject to the approval of the Shareholders' Meeting as specified by the Law;

ժը) Որոշում կայացնել Վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման մասին և հաստատել դրանց ներքին կանոնակարգերը,

r) make decision on establishing branches and representative offices of the Credit Organization and approve their internal regulations;

ժթ) Որոշում կայացնել այլ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում մասնակցելու մասին, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում, որը ենթակա է հաստատման Բաժնետերերի ժողովի կողմից՝ Օրենքով սահմանված կարգով,

s) make decision on participation in the charter capital of other legal entities unless such participation is considered a large-scale transaction which is subject to the approval of the Shareholders' Meeting pursuant to the Law;

ի) Որոշում կայացնել հոլդինգային ընկերություններում, ֆինանսական և արդյունաբերական խմբերում, միավորումներում և առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցության մասին,

t) make decision on participation in holding companies, financial and industrial groups, associations and other unions of commercial organizations;

իա) Հաստատել ցանկացած պայմանագիր, ներառյալ՝ առանց սահմանափակման, Վարկային կազմակերպության գույքի օտարման պայմանագրեր, վարկային պայմանագիր, ծախսերի նախահաշվով չնախատեսված՝ գումարի փոխանցում, չեկ, մուրհակ, վարկ, երաշխիք կամ հավաստագիր, կամ այլ ֆինանսական գործիք կամ գործառնություն, որը գերազանցում է 25,000 ԱՄՆ դոլարի համարժեքը տեղական արժույթով: Ընդ որում, 25,000 ԱՄՆ դոլարի սահմանափակման մեջ չեն մտնում Վարկային կազմակերպության բանկային հաշվից ծախսերի նախահաշվով նախատեսված գործունեության կապակցությամբ կատարվող փոխանցումները,ինչպես նաև Վարկային Կազմակերպության կողմից որպես հիմնական գործունեություն հաճախորդներին

u) approve any and all agreements, including, but not limited to the disposal of the Credit Organization's property, any loan agreement, the non-budgeted transfer of money, a check, a draft, a loan, guarantee or endorsement, note, or other financial instrument or activity, exceeding the local currency equivalent of USD 25,000.Transfers between the Credit Organization's bank account and any budgeted activities as well as the loans provided to Clients as a main activity performed by the Credit Organization as well as deposits in the banks of Armenia are not included in the $25,000 limitation;

տրվող վարկերը և ՀՀ բանկերում դրված ավանդները:

իբ) Օրենքով նախատեսված դեպքերում թույլատրել խոշոր գործարքների կնքումը,

v) authorize the conclusion of a large-scale transaction in the cases specified by the Law;

իգ) Սահմանել և ըստ անհրաժեշտության փոփոխել վարկային քաղաքականության ուղղությունը և ներքին վերահսկողության կանոնները, այդ թվում՝ Վարկային կազմակերպության տուղիտի և ֆինանսական վերահսկողության ընթացակարգերը,

w) determine the credit policy line and the internal control rules, including audit and financial supervision procedures of the Credit Organization and amend them as necessary;

Իդ Լուծել այլ հարցեր, որոնք Խորհուրդն էական է համարում Վարկային կազմակերպության զարգացման համար, կամ որոնք նախատեսված են Օրենքով և սույն Կանոնադրությամբ:

x) resolve other issues which the Board deems material for the development of the Credit Organization or which are stipulated by the Law and this Charter.

Սույն կետով նախատեսված հարցերը պատկանում են Վարկային կազմակերպության Խորհրդի բացառիկ իրավասությանը և չեն կարող պատվիրակվել Վարչությանը՝ բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

The issues defined in this clause are within the exclusive competence of the Board of the Credit Organization and cannot be delegated to the executive body except for the cases defined by the Law.

**12.4.** Խորհրդի անդամների պարտականությունները և պարտավորությունները:

Խորհրդի անդամները պետք է պատրաստ լինեն բավարար ժամանակ հատկացնել իրենց պարտականությունների և պարտավորությունների արդյունավետ կատարմանը և պետք է պատրաստ լինեն երկարաժամկետ ծառայություն իրականացնել Խորհրդի կազմում: Ցանկացած անդամ պարտավոր է սույնով նախատեսված իր պարտականությունները կատարել բարեխղճորեն և այնչափ հոգատար, որչափ կկատարեր նմանատիպ իրավիճակում հայտնված շրջահայաց անձը: Տնօրեններն իրավասու են այդ պարտականությունների կատարման մեջ հենվել Վարկային կազմակերպության մեկ կամ մի քանի գործակալների կամ

**12.4. Duties and responsibilities of the Board members.**

Members of the Board must be willing to devote sufficient time to carrying out their duties and responsibilities effectively, and shall be committed to serve on the Board for an extended period of time. Any and all members shall perform their respective duties hereunder in good faith and with that degree of care that an ordinary prudent person in a like position would use under similar circumstances. The directors shall be entitled to rely, in the performance of such duties, on information, opinions, reports or statements, including financial statements, in each case prepared by one or more agents or employees, counsel, public accountants or other persons employed by the Credit Organization as to matters that the members of the Board believe to be within such person's competence.

Members of the Board shall have the right to obtain any information from the Executive Board that the Board reasonably deems necessary, to visit

աշխատակիցների, խորհրդատուների, հաշվապահների կամ այլ վարձու աշխատողների պատրաստած այն տեղեկությունների, կարծիքների, հաշվետվությունների կամ տեղեկանքների, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվությունների վրա, որոնք Խորհրդի անդամների կարծիքով պատկանում են տվյալ անձի իրավասությունների շրջանակին:
Խորհրդի անդամներն իրավասու են Վարչությունից ստանալ ցանկացած տեղեկություն, որը Խորհուրդը ողջամտորեն անհրաժեշտ կհամարի, ինչպես նաև այցելել Վարկային կազմակերպության գործունեության իրականացման տարածքները և ունենալ Վարկային կազմակերպության կորպորատիվ մատյաններին և գրառումներին ծանոթանալու հնարավորություն:

the premises where the business of the Credit Organization is conducted, and to have access to the Credit Organization's corporate books and records.

**12.5.** Խորհրդի Նախագահը:
Խորհրդի Նախագահն ընտրվում, վերընտրվում և պաշտոնից ազատվում է Բաժնետերերի ժողովի կողմից: Վարկային կազմակերպության Խորհրդի Նախագահը.

ա) Համակարգում է Վարկային կազմակերպության Խորհրդի աշխատանքները,

բ) Գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,

գ) Կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

դ) Նախագահում է Բաժնետերերի ժողովները:

Խորհրդի Նախագահի բացակայության կամ իր պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա պարտականությունները Խորհրդի որոշմամբ կատարում է Խորհրդի անդամներից մեկը:

**12.5. The Chairman of the Board.**
The Chairman of the Board shall be elected, re-elected and dismissed by Shareholders Meeting. The Chairman of the Board of the Credit Organization shall:

a) coordinate the activities of the Board of the Credit Organization;

b) assemble Board sessions and preside over them;

c) organize the filing of session minutes; and

d) presides over the Shareholders' Meetings;

The duties of the Chairman of the Board shall be exercised by one of the Board members on the decision of the Board should the Chairman of the Board be absent or unable to perform his/her duties.

**12.6.** Խորհրդի անդամների ռեեստրը:
Վարկային կազմակերպությունը Հայաստանի օրենսդրությանը

**12.6. The Board Members Register.**
The Credit Organization shall keep the register of the Board members in accordance with the Armenian Law. The register shall be available to

համապատասխան վարում է Խորհրդի անդամների ռեեստրը: Ռեեստրը տրամադրվում է Վարկային կազմակերպության Բաժնետերերին:

the Shareholders of the Credit Organization.

**12.7.** Խորհրդի նիստերը:

Խորհրդի հերթական նիստեր անցկացվում են յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի ընթացքում առնվազն մեկ անգամ: Խորհրդի հերթական և արտահերթ նիստերը գումարում է Խորհրդի նախագահն իր նախաձեռնությամբ՝ Վարկային կազմակերպության Խորհրդի անդամի, Վերստուգողի, Գլխավոր տնօրենի կամ Վարչության պահանջով:

Խորհրդի նիստերը կարող են անցկացվել Հայաստանի Հանրապետությունում կամ այլ պետություններում՝ ցանկացած վայրում, Խորհրդի որոշմամբ, և կարող են անցկացվել նաև հեռախոսային խորհրդաժողովի (կոնֆերանս), վիդեո-կոնֆերանսի կամ էլեկտրոնային կամ հեռախոսային հաղորդակցության նմանատիպ այլ եղանակներով:

**12.7. Board Meetings.**

Regular meetings of the Board shall be held not less than once every calendar quarter. Regular and special meetings of the Board shall be convened by the chairman of the Board on his/her initiative, on the demand of a member of the Board, the Controller, the General Director or the Executive Board of the Credit Organization.

Meetings of the Board may be held in any location in the Republic of Armenia and in other countries as determined by the Board, and may also be held via telephone conference, video-conference or similar form of electronic or telephone communication.

**12.8.** Ծանուցումը:

Խորհրդի հերթական նիստերը գումարվում են Խորհրդի Նախագահի (կամ նրա կողմից լիազորված անձի) կողմից՝ նախապես առնվազն հինգ (5) օր առաջ Խորհրդի բոլոր անդամներին փոստով, ֆաքսով, տելեգրամով կամ էլեկտրոնային փոստով ծանուցելով նիստի ամսաթվի, ժամի, վայրի և օրակարգի մասին: Եթե Խորհրդի հերթական նիստի ամսաթիվը կամ օրը, ժամը և վայրը հայտարարվել են Խորհրդի նախորդ նիստի ընթացքում, ապա ծանուցել չի պահանջվում: Արտահերթ նիստի անցկացման վայրի, ամսաթվի և ժամի ծանուցումը պետք է փոստով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով հնարավորին չափ շուտ նախապես տրվի Խորհրդի բոլոր անդամներին: Եթե ծանուցման մեջ այլ բան նշված չէ, ապա արտահերթ նիստի ընթացքում կարող է քննարկվել ցանկացած հարց և ընդունվել ցանկացած որոշում:

Խորհրդի որևէ նիստի մասին ծանուցում ստանալու պահանջից Խորհրդի ցանկացած անդամ կարող է տվյալ նիստից առաջ, նիստի

**12.8. Notice.**

Regular meetings of the Board shall be called by the Chairman of the Board (or his/her designee) by giving at least five (5) days' notice of the date, time, place, and agenda thereof to each member of the Board by mail, fax, telegram, or e-mail. If the day or date, time and place of the regular meeting of the Board has been announced at a previous meeting of the Board, no notice is required. Notice of the place, date, and time of a special meeting shall be given to each member of the Board as far in advance as reasonably possible by mail, fax, or e-mail. Unless otherwise indicated in the notice thereof, any and all business may be transacted at a special meeting.

Notice of any meeting of the Board may be waived by any member of the Board either before, at, or after such meeting orally or in a writing, signed by such member. A member, by his attendance at any meeting of the Board, shall be deemed to have waived notice of such meeting, except where the member objects at the beginning of the meeting to the transaction of business because the meeting is not lawfully called or convened and does not participate thereafter in the meeting.

ընթացքում կամ նիստից հետո հրաժարվել կամ բանավոր, կամ գրավոր՝ տվյալ անդամի ստորագրությամբ: Խորհրդի որևէ նիստին Խորհրդի անդամի ներկա գտնվելու փաստը համարվում է այդ նիստի մասին ծանուցվելու պահանջից հրաժարում տվյալ անդամի կողմից, բացառությամբ երբ անդամը նիստի սկզբում առարկում է որոշումների կայացմանն այն հիմքով, որ նիստը օրինական կարգով չի հրավիրվել կամ գումարվել, և դրանից հետո չի մասնակցում նիստին:

**12.9.** Օրակարգը և փաստաթղթերը:
Խորհրդի և Հանձնաժողովների հերթական նիստերի օրակարգը և հարակից նյութերը, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվությունները և որոշումները, բաժանվում են բոլոր անդամներին նիստից առնվազն հինգ (5) առաջ: Որպես կանոն, կոնկրետ թեմաների վերաբերյալ ներկայացվելիք նյութերն ուղարկվում են Խորհրդի և Հանձնաժողովների անդամներին նախապես, որպեսզի հնարավոր լինի տնտեսել նիստի ժամանակը և նիստի ընթացքում քննարկումը սևեռել տվյալ նյութի վերաբերյալ անդամների հարցերի ուղղությամբ: Այն դեպքերում, երբ խնդրո առարկան չափազանց զգայուն է և չի կարող գրավոր ներկայացվել, դրա ներկայացումը կատարվում է միայն նիստի ընթացքում: Խորհրդի և վերջինիս Հանձնաժողովների արտահերթ նիստերի օրակարգը և հարակից նյութերը բաժանվում են նախապես՝ ողջամտորեն հնարավորին չափ շուտ:

**12.9. Agenda and documents.**
For regular Board and Committees meetings, the agenda and associated materials, including financial reports and resolutions, will be circulated to all members at least five (5) days in advance. As a general rule, presentations on specific subjects will be sent to the Board and Committee members in advance so that meeting time may be conserved and discussion time focused on the members' questions on the materials. On those occasions when the subject matter is too sensitive to put in writing, the presentation will then be confined to the meeting. For special meetings of the Board and Committees thereof, the agenda and associated materials shall be circulated as far in advance as reasonably possible.

**12.10.** Առանց նիստի գործողություններ կատարելը:
Ցանկացած գործողություն, որը պահանջվում կամ թույլատրվում է կատարել Խորհրդի ցանկացած նիստի ընթացքում, կարող է կատարվել առանց նիստի, առանց նախապես ծանուցելու, և առանց քվեարկելու, եթե սույն Կանոնադրության 12.11 կետի համաձայն քվորում կազմող՝ Խորհրդի անդամների կողմից գրավոր ստորագրվում է կամ ստորագրվում են կատարվելիք գործողությունը նկարագրող համաձայնություն կամ

**12.10. Action without a meeting.**
Any action which is required or permitted to be taken at any meeting of the Board, may be taken without a meeting, without prior notice and without a vote if a consent or consents in writing, setting forth the action so taken, shall be signed by the members of the Board constituing a quorum in accordance with section 12.11 of this Charter. A decision signed or approved in writing by members of the Board pursuant to this paragraph shall be as valid and effective as if the same had been made at a meeting of the Board duly called and held. Such a decision may consist of one or more documents in identical form signed in counterpart. Within 3 days after the action has been taken by written

համաձայնություններ: Սույն պարբերության համաձայն Խորհրդի անդամների կողմից գրավոր ստորագրված կամ հաստատված որոշումը նույնչափ վավեր է և ունի նույնչափ օրինական ուժ, որչափ կունենար, եթե կայացվեր Խորհրդի՝ սահմանված կարգի համաձայն հրավիրված և անցկացված նիստի ընթացքում: Այդ որոշումը կարող է բաղկացած լինել նույն տեքսն ունեցող և հավասարազոր կրկնօրինակներով ստորագրված մեկ կամ մի քանի փաստաթղթերից: Գրավոր համաձայնության միջոցով գործողություն կատարելուց հետո 3 օրվա ընթացքում գրավոր համաձայնության մեկ օրինակը բաժանվում է այն անդամներին, ովքեր գրավոր իրենց համաձայնությունը չեն տվել:

consent, a copy of the written consent shall be distributed to those members who have not consented in writing.

**12.11.** Քվորում:

Խորհրդի երեք անդամի ներկայությունն ապահովում է քվորում Խորհրդի նիստերի ընթացքում որոշումներ կայացնելու համար: Խորհրդի անդամն օրինական կերպով կարող է մասնակցել նիստին հեռախոսային կոնֆերանսի, վիդեո-կոնֆերանսի կամ էլեկտրոնային կամ հեռախոսային հաղորդակցության նմանատիպ որևէ այլ եղանակով, եթե նիստին մասնակցող բոլոր մյուս անձինք ի վիճակի են ողջ նիստի ընթացքում լսել իրար և խոսել, կամ այլ կերպ հաղորդակցվել իրար հետ: Համարվում է, որ այս կերպ նիստին մասնակցող անդամն անձամբ ներկա է Խորհրդի նիստին, և իրավասու է քվեարկել և ներառվել քվորումի հաշվարկի մեջ:

Խորհրդի անդամը կարող է նախապես գրավոր տալ իր համաձայնությունը կամ առարկությունը Խորհրդի նիստում քննարկման դրված առաջարկի վերաբերյալ: Եթե Խորհրդի այդ անդամը նիստին ներկա չէ, ապա, քվորումի առկայությունը պարզելու առումով, առաջարկի վերաբերյալ նրա համաձայնությունը կամ առարկությունը համարվում է ներկայություն:

**12.11. Quorum.**

Three members of the Board shall constitute a quorum for the transaction of business at the Board meetings. A member of the Board may validly participate in a meeting through the medium of telephone conference, video-conference or similar form of electronic or telephone communication, if all persons participating in the meeting are able to hear and speak, or otherwise communicate, to each other throughout the meeting. A member participating in this way is deemed to be present in person at the meeting of the Board and shall be entitled to vote and be counted in a quorum.

A member of the Board may give advance written consent or opposition to a proposal to be acted on at a meeting of the Board. If such member of the Board is not present at the session, consent or opposition to the proposal shall constitute presence for purposes of determining the existence of a quorum.

**12.12.** Խորհրդի որոշումները:

Խորհրդի որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների՝ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ,

**12.12. Board decisions.**

The Board decisions shall be adopted by the majority of the votes of the Board members present in the meeting unless otherwise stipulated by the Law or this Charter. Each Board member shall

եթե Օրենքով կամ սույն Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը Խորհրդի մեկ անդամից մյուսին չի թույլատրվում: Վարկային կազմակերպության Խորհրդի Նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք:
Վարկային կազմակերպության անունից ստորագրվելիք բոլոր պայմանագրերը կամ փաստաթղթերը, որոնց համար պահանջվում է Խորհրդի հաստատում, կարող են ստորագրվել Գլխավոր տնօրենի կողմից միայն Խորհրդի կողմից դրանց հաստատումից հետո:

have one vote. It is prohibited to transfer the voting right and the vote itself from one Board member to another. The Chairman of the Board of the Credit Organization shall have a casting vote.

All contracts or documents to be signed on behalf of the Credit Organization which require approval by the Board may be signed by the General Director only after approval by the Board.

**12.13.** Արձանագրությունները:
Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո 5-օրյա ժամկետում: Արձանագրությունը ստորագրում են Խորհրդի նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար: Խորհրդի նիստերի արձանագրություններն անվտանգ պահպանվում են Վարկային կազմակերպության գլխավոր գրասենյակում:

**12.13. Minutes.**
Minutes shall be taken at the meetings of the Board. The minutes shall be prepared within 5 days after closing of the meeting. The minutes shall be signed by all the members of the Board participating in the meeting who shall be responsible for validity of the data provided in the minutes.Minutes of the meetings of the Board shall be safe-kept at the Credit Organization's principal office.

**12.14.** Տնօրենների խորհրդի Հանձնաժողովները:
Խորհրդի նիստում, որում առկա է քվորում, ներկա գտնվող Խորհրդի անդամների մեծամասնությամբ կարող են նշանակվել և հաստատվել Վարկային կազմակերպության կառավարման գործում Խորհրդի իրավասություններ չունեցող և չիրականացնող Հանձնաժողովներ: Խորհրդի Նախագահը կարող է նշանակել ժամանակավոր հանձնաժողովներ: Հանձնաժողովի նիստերը կարող են գումարվել Հայաստանի Հանրապետության տարածքում կամ դրանից դուրս: Դրանք կարող են անցկացվել նաև հեռախոսային խորհրդաժողովի (կոնֆերանս), վիդեո-կոնֆերանսի կամ էլեկտրոնային կամ հեռախոսային հաղորդակցության նմանատիպ այլ եղանակներով: Ժամանակի

**12.14. Committees of the Board of Directors.**
Committees not having or exercising the authority of the Board in the management of the Credit Organization may be designated by resolution and adopted by a majority of the members of the Board present at a meeting at which a quorum is present. The Chairman of the Board may appoint ad hoc committees. Meetings of a committee may be held within or outside the Republic of Armenia and may be held by means of telephone conference, video-conference or similar form of electronic or telephon communication. A majority of then serving members of any committee shall constitute a quorum, unless the committee shall consist of two (2) members, in which event any action must be by unanimous consent, or of one (1) member, in which event one (1) member shall constitute a quorum; and all matters shall be determined by a majority vote of the members present. Action may be taken by any committee without a meeting if all members thereof consent thereto in writing, and the writing or writings are filed with the minutes of the

կոնկրետ պահի դրությամբ որևէ հանձնաժողովի կազմի մեջ մտնող անդամների մեծամասնությունը հանդիսանում է քվորում, բացառությամբ երբ հանձնաժողովը բաղկացած է երկու (2) անդամից, որի դեպքում հանձնաժողովի ցանկացած գործողություն պետք է կատարվի միաձայն համաձայնությամբ, իսկ եթե հանձնաժողովը բաղկացած է մեկ (1) անդամից, ապա այդ մեկ (1) անդամի ներկայությունը հանդիսանում է քվորում: Հանձնաժողովների ցանկացած որոշումներ կայացվում են ներկա գտնվող անդամների ձայների մեծամասնությամբ: Ցանկացած հանձնաժողովի կողմից որոշումները կարող են կայացվել առանց նիստ գումարելու, եթե դրա բոլոր անդամները գրավոր տալիս են իրենց համաձայնությունն այդ կերպ վարվելու համար, ընդ որում՝ համաձայնությունը հաստատող գրությունը կամ գրությունները ներառվում են տվյալ հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ: Յուրաքանչյուր հանձնաժողով պարտավոր է վարել իր գործունեության արձանագրություններ և իր գործունեության արդյունքների մասին զեկուցել Խորհրդին:

proceedings of such committee. Each committee shall keep records of its actions, and report such actions to the Board.

**12.15. Տնօրենների խորհրդի Աուդիտի հանձնաժողովը:**

Տնօրենների խորհուրդը կարող է պաշտոնավարող Տնօրենների ձայների մեծամասնությամբ կայացվող որոշմամբ նշանակել և հաստատել Աուդիտի հանձնաժողով, որը պետք է բաղկացած լինի առնվազն երեք անդամից: Հանձնաժողովի անդամ կարող են նշանակվել Խորհրդի անդամ չհանդիսացող անձինք: Աուդիտի հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է լինի ֆինանսական փորձագետ: Աուդիտի հանձնաժողովի գործունեությունն ուղղորդվում և վերահսկվում է Տնօրենների խորհրդի կողմից: Տնօրենների խորհուրդն է որոշում Աուդիտի հանձնաժողովի անդամների վարձատրության կարգը և չափը և լրացնում Աուդիտի հանձնաժողովում առաջացող թափուր տեղերը:

Աուդիտի հանձնաժողովը չի իրականացնում ֆինանսական վերահսկողության այնպիսի գործառույթներ, որոնք սույն

**12.15. Audit Committee of the Board of Directors.**

The Board of Directors by resolution adopted by a majority of the Directors in office may designate and appoint an Audit Committee which shall consist of not less than three members. Persons may be designated as committee members who are not members of the Board. At least one member of the Audit Committee shall be a financial expert. Audit Committee is subject to the direction and control of, including the decision on remuniration of the Audit Committee members and the size thereof, and vacancies in the membership thereof shall be filled by, the Board of Directors.

The Audit Committee shall not exercise financial control functions which are reserved for the Controller of the Credit Organization in accordance with this Charter and the Armenian Law.

Կանոնադրությամբ և Հայաստանի օրենսդրությամբ վերապահված են Վարկային կազմակերպության Վերստուգողին:

## ՀՈԴՎԱԾ 13. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

Վարկային կազմակերպության ընթացիկ գործունեությունը ղեկավարվում է Վարկային կազմակերպության Գլխավոր տնօրենի կողմից՝ Վարչության հետ միասին: Վարկային կազմակերպության Գլխավոր տնօրենը և Վարչությունը հաշվետու են Տնօրենների խորհրդին և Բաժնետերերի ժողովին:

**13.1.** Վարչության կազմը:

Վարչությունը Վարկային կազմակերպության կոլեգիալ գործադիր մարմին է: Գլխավոր տնօրենը, Գլխավոր ֆինանսական տնօրենը և Գլխավոր գործառնական տնօրենն ի պաշտոնե հանդիսանում են Վարչության անդամներ: Վարչության կազմը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Տնօրենների խորհրդի որոշմամբ: Գլխավոր տնօրենը հանդիսանում է Վարչության նախագահը և պատասխանատու է Վարչության գործունեության համար:

Գլխավոր տնօրենի և Վարչության անդամների հետ պայմանագրերը ստորագրվում են Տնօրենների խորհրդի Նախագահի կողմից, բացառությամբ երբ Վարչության անդամներն աշխատանքի են վերցվում Բաժնետիրոջ կողմից և Վարկային կազմակերպության պաշտոնատար անձանց իրենց գործառույթները կատարում են Վարկային կազմակերպության ու Բաժնետիրոջ միջև կնքված կառավարչական կամ գործուղման պայմանագրերի հիման վրա:

Գլխավոր տնօրենը և Վարչության այլ անդամները պետք է համապատասխանեն ՀՀ կենտրոնական բանկի սահմանած որակավորման և արհեստավարժության պահանջներին:

**13.2.** Վարչության նիստերը:

Վարչությունը պարբերաբար նիստեր է

## ARTICLE 13. THE EXECUTIVE BOARD

The day-to-day activities of the Credit Organization shall be managed by the General Director of the Credit Organization together with the Executive Board. The General Director and the Executive Board of the Credit Organization shall report to the Board of Directors and to the Shareholders' Meeting.

**13.1. Composition of the Executive Board.**

The Executive Board is a collegial executive body of the Credit Organization. The General Director, the Chief Financial Officer and the Chief Operational Officer shall be the designated ex officio members of the Executive Board. The composition of the Executive Board can be changed from time to time by the decision of the Board of Directors. The General Director shall be the chair of the Executive Board and shall be responsible for its activity.

The contracts with the General Director and Executive Board members should be signed by the Chairman of the Board of Directors, unless members of the Executive Board shall be employed by the Shareholder and shall act in their capacities as officers of the Credit Organization under management or secondment contracts between the Credit Organization and such Shareholder.

The General Director and the other Executive Board members should meet the qualifications and professional requirements determined by the CBA.

**13.2. Meetings of the Executive Board.**

The Executive Board shall meet regularly to

գումարում՝ քննարկելու Վարկային կազմակերպության ընթացիկ գործունեությունը: Վարչության որոշումները կայացվում են անդամների կողմ ձայների մեծամասնությամբ: Վարչության որևէ որոշում չի կարող կայացվել առանց Գլխավոր տնօրենի՝ այդ որոշմանը կողմ քվեարկելու:
Վարչությունը գործում է սույն Կանոնադրությանը համապատասխան հաստատված կանոնակարգի համաձայն: Կանոնակարգը սահմանում է Վարչության նիստերի անցկացման և որոշումների կայացման կարգը:

discuss the day-to-day activities of the Credit Organization. Decisions of the Executive Board shall be taken by an affirmative vote of a majority of the members thereof. No decisions of the Executive Board can be taken without an affirmative vote of the General Director.
The Executive Board shall act on the basis of the regulation approved in accordance with this Charter. Such regulation shall determine the procedure of holding meetings and adopting decisions of the Executive Body.

**13.3.** Վարչության իրավասությունները:
Վարկային կազմակերպության Վարչությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.

**13.3. Competence of the Executive Board.**
The Executive Board of the Credit Organization shall exercise the following functions:

ա) Նախապատրաստում և Տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Վարկային կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը,

a) prepare and recommend for approval to the Board of Directors the internal organizational structure of the Credit Organization;

բ) Նախապատրաստում և Տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Վարկային կազմակերպության ծախսերի ամենամյա նախահաշիվը և գործարար ծրագիրը,

b) prepare and recommend for approval to the Board the annual budget and business plan of the Credit Organization;

(գ) Իրականացնում է Վարկային կազմակերպության ընթացիկ գործունեությունը և բոլոր գործառնությունները, ներառյալ պայմանագրերի բանակցումը և կնքումը, որը սույն Կանոնադրությամբ պահանջվող դեպքերում ենթակա է հաստատման Բաժնետերերի ժողովի կամ Տնօրենների խորհրդի կողմից,

c) conduct the day-to-day operations and all activities of the Credit Organization, including negotiation and conclusion of agreements, subject to approval as may be required by this Charter by the Shareholders' Meeting or the Board of Directors;

դ) Որոշումներ է կայացնում աշխատակազմի ընտրության, նշանակման և վերապատրաստման մասին, մշակում, հաստատում և անհրաժեշտության դեպքում Տնօրենների խորհրդի հաստատմանն է

d) make decisions related to personnel selection, assignment and retrainment, develop, approve and, when necessary recommend for approval to the Board of Directors, salary structures, incentives and benefit plans for the Credit Organization's employees;

ներկայացնում Վարկային կազմակերպության աշխատակիցների աշխատավարձի կառուցվածքը, խթանները և նյութական պարգևների ծրագրերը,

ե) Վարկային կազմակերպության ներքին կանոնակարգերը և մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների կանոնակարգերը ներկայացնում է Տնօրենների խորհրդի հաստատմանը,

e) submit internal regulations and regulations on branch and representative offices of the Credit Organization for the approval of the Board of Directors;

զ) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Վարկային կազմակերպության ծառայությունների նոր տեսակները և նոր գործառնությունների ու գործունեության իրականացման կարգը՝ սույն Կանոնադրությամբ նախատեսված շրջանակներում, ի նպաստ Վարկային կազմակերպության նպատակների իրագործման,

f) recommend to the Board for approval new kinds of services and carrying out new transactions and activities by the Credit Organization within the framework of this Charter and in furtherance of the objectives of the Credit Organization;

է) Սահմանում է Վարկային կազմակերպության կողմից վարկերի և փոխառությունների տրամադրման կարգն ու պայմանները, վարկային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների սակագները, ինչպես նաև վարկավորման ընթացակարգին վերաբերվող ներքին իրավական ակտերը, բացառությամբ Վարկային կազմակերպության առաքելության, Վարկային բաժնի կառուցվածքի, հաճախորդների ընտրության չափանիշների, վարկային ծառայողների, թիմի ղեկավարների և տարածքային ստորաբաժանումների ղեկավարների խրախուսական համակարգի, վարկերի վերակառուցման (վարկային գործող պայմանագրի պայմանների փոփոխության) կարգի, վարկային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների ընդհանուր բնութագրման, ներքին վերահսկողության հետ հարաբերությունների ընթացակարգերի,

g) determine the terms and conditions of loans, the fees for the services provided by the Credit organization as well as adopt internal legal acts providing lending procedures, except the mission of the credit organization, the structure of the credit department, criteria for clients selection, loan officers, team leaders and branch and representative office managers incentive system, loan restructuring terms, interconnection with the internal audit department, the general description of loan products which are adopted by the Board of Directors of the credit organization;

որոնք սահմանելու իրավասությունը հանդիսանում է Ընկերության Տնօրենների խորհրդի իրավասությունը

ը) Ամենամյա հաշվետվություններ է պատրաստում Վարկային կազմակերպության գործարար գործունեության կարևորագույն ուղղությունների վերաբերյալ և դրանք ներկայացնում Տնօրենների խորհրդին,

h) prepare monthly reports on key aspects of the Credit Organization's business operations and present these reports to the Board of Directors;

թ) Որոշումներ է կայացնում Վարկային կազմակերպության գործունեության այլ կարևոր հարցերի վերաբերյալ:

i) make decisions on other significant matters of the Credit Organization's operations.

Վարչությունը կարող է իրականացնել Հայաստանի օրենսդրությամբ և Վարչության կանոնակարգով նախատեսված այլ գործառույթներ:

The Executive Board may exercise other powers defined by the Armenian Law and the regulation on the Executive Board.

## ՀՈԴՎԱԾ 14. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԸ ԵՎ ԱՅԼ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆՔ:

## ARTICLE 14. GENERAL DIRECTOR AND OTHER OFFICERS OF THE CREDIT ORGANIZATION

**14.1.** Գլխավոր տնօրենը:
Գլխավոր տնօրենը Վարչության ղեկավարն է: Գլխավոր տնօրենը սույնով նախատեսված կարգով Տնօրենների խորհրդի ներկայացմամբ նշանակվում է Բաժնետերերի ժողովի կողմից երկու տարի ժամկետով:
Գլխավոր տնօրենը Վարկային կազմակերպության քաղաքականության իրագործման և Վարկային կազմակերպության գործունեության համար պատասխանատու, լրիվ դրույքով աշխատող ամենաբարձր պաշտոնատար անձն է: Գլխավոր տնօրենը գործում է Վարկային կազմակերպության անունից առանց լիազորագրի, մասնավորապես.

**14.1. General Director.**
The General Director shall be the head of the Executive Board and shall be appointed fora two-year term by the Shareholders' Meeting upon the recommendation of the Board of Directors as provided herein.
The General Director shall be the highest ranking full time officer in charge of implementing the policy of the Credit Organization and responsible for its operations. The General Director shall act on behalf of the Credit Organization without a power of attorney, and in particular shall:

ա) Տնօրինում է Վարկային կազմակերպության գույքը,

a) dispose of the property of the Credit Organization;

բ) Վարկային կազմակերպության անունից սույն Կանոնադրության դրույթների համաձայն կնքում է գործարքներ և պայմանագրեր, այդ թվում՝

b) enter into transactions and execute contracts, including labor contracts, on behalf of the Credit Organization in accordance with the provisions of this Charter;

աշխատանքային պայմանագրեր,

գ) Ներկայացնում է Վարկային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության կառավարության և պետական գերատեսչությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ հարաբերություններում,

c) represent the Credit Organization in the relations with the government and agencies of the Republic of Armenia as well as with organizations, legal entities and individuals in the Republic of Armenia and abroad;

դ) Տալիս է Վարկային կազմակերպության անունից գործելու լիազորագրեր,

d) issue powers of attorneys to act on behalf of the Credit Organization;

ե) Արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ աշխատակիցներին և աշխատակազմի անդամներին և վերահսկում է դրանց կատարումը,

e) issue decrees, orders, give compelling instructions to the staff members and employees, and monitor the way they are implemented;

զ) Աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Վարկային կազմակերպության աշխատակիցներին,

f) hire and dismiss employees of the Credit Organization;

(է) Աշխատակիցների նկատմամբ կիրառում է Վարչության կողմից հաստատված խրախուսման և շահադրդման միջոցներ, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառում Վարկային կազմակերպության աշխատակիցների նկատմամբ,

g) apply employment incentives and benefits approved by the Executive Board as well as impose disciplinary measures on the employees of the Credit Organization;

ը) Ապահովում է, որպեսզի Վարկային կազմակերպության ծախսերը չգերազանցեն հաստատված բյուջեն,

h) ensure that expenditures of the Credit Organization are within the approved budget;

թ) Իրականացնում է Հայաստանի օրենսդրությամբ և Վարչության Կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

i) exercise other powers as defined by the Armenian Law and the Regulation on the Executive Board.

Գլխավոր տնօրենն առաջնորդում է Վարկային կազմակերպությունը՝ մշակելով Տնօրենների խորհրդի և/կամ Բաժնետերերի ժողովի կողմից հաստատման ենթակա կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակներ, պլաններ և

The General Director shall give leadership to the Credit Organization through developing both short and long-range objectives, plans and policies for approval of the Board of Directors and/or Shareholders' Meeting, and through implementing and maintaining the approved policies.

քաղաքականություններ, ինչպես նաև հաստատված քաղաքականություններն ի կատար ածելու և դրանց կատարում ապահովելու միջոցով:

**14.2.** Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրենները:
Վարչության անդամների, ինչպես նաև Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրենների պարտականությունները սահմանվում են Տնօրենների խորհրդի կողմից կամ, եթե չեն սահմանվում Տնօրենների խորհրդի կողմից, ապա սահմանվում են Վարկային կազմակերպության Գլխավոր տնօրենի կողմից:

**14.2. Chief Financial and Chief Operational Officers.**
The members of the Executive Board, Chief Financial and Chief Operational Officers, shall have such responsibilities as determined by the Board of Directors or if not so determined, by the General Director of the Credit Organization.

**14.3.** Պաշտոնատար անձանց վարքագծի կանոնագիրքը:
Վարկային կազմակերպության պաշտոնատար անձինք պարտավոր են գործել բարեխղճորեն, ելնելով Վարկային կազմակերպության շահերից:

**14.3. Code of Conduct of the Officers.**
Officers of the Credit Organization shall act in good faith and in the best interests of the Credit Organization.

## ՀՈԴՎԱԾ 15.
## ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

## ARTICLE 15.
## FINANCIAL CONTROLS

**15.1.** Աուդիտի գործառույթը:
Վարկային կազմակերպությունն աուդիտի գործառույթի համար ունի հետևյալ կառուցվածքը.

ա) Վերստուգող,
բ) Ներքին աուդիտ,
գ) Արտաքին աուդիտ:

**15.1. Audit Function.**

The Credit Organization shall have the following structure for the audit function:

a) Controller;
b) Internal Audit;
c) External Audit.

**15.2.** Վերստուգողը:
Վերստուգողը հետևում է Վարկային կազմակերպության կառավարման մարմինների որոշումների կատարմանը և ապահովում կիրառելի օրենքների, կանոնակարգերի և ստանդարտների պահանջների կատարումը Վարկային կազմակերպության կողմից: Վերստուգողը նշանակվում է Բաժնետերերի ժողովի կողմից երեք տարի ժամկետով: Վերստուգողի նշանակման ժամկետի ավարտից հետո նոր ժամկետով

**15.2. Controller.**
Controller shall monitor the implementation of the decisions of the management bodies of the Credit Organization and ensure that Credit Organization is in compliance with applicable laws, regulations and standards. The Controller shall be appointed by the Shareholders' Meeting for a three-year term and shall have financial experience and expertise. Members of the Board of Directors and Executive Board of the Credit Organization may not be appointed as the Controller If after the expiration of the term of appointment of the Controller there is no resolution on the appointment of the

վերստուգողի նշանակման վերաբերյալ որոշում չընդունելու պարագայում վերստուգողի ժամկետը համարվում է երկարաձգված ևս երեք տարով: Վերստուգողը պետք է ունենա ֆինանսական ոլորտում աշխատանքի փորձ և գիտելիքներ: Վարկային կազմակերպության Տնօրենների խորհրդի և վարչության անդամները չեն կարող նշանակվել Վերստուգող:
Վարկային կազմակերպության գործունեությունը վերստուգվում է Վերստուգողի կողմից, որը ստուգում է Վարկային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքները, ստուգում է Վարկային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, Բաժնետերերի ժողովի կամ Տնօրենների խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Վարկային կազմակերպության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10%-ի սեփականատեր Բաժնետիրոջ (Բաժնետերերի) պահանջով:
Ստուգումներ կատարելու ընթացքում Վերստուգողն իրավասու է ստանալ Վարկային կազմակերպության, վերջինիս մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեությանը վերաբերող անհրաժեշտ ցանկացած փաստաթուղթ, նյութեր և բացատրություններ: Վերստուգողը հաշվետու է Բաժնետերերի առջև:

Controller the same Controller is considered appointed for the next three years.
The Credit Organization's operations shall be subject to review by the Controller who shall inspect the results of the annual financial performance, financial activities of the Credit Organization either on its own initiative at any time or based on a decision of the Shareholders' Meeting or Board of Directors, as well as at the request of the Shareholder(s) owner(s) of at least 10% of the voting shares of the Credit Organization.
In performing inspections the Controller shall have access to all necessary documents, materials, and explanations concerning the financial activities of the Credit Organization, its branches and representative offices. The Controller shall be accountable to the Shareholders.

**15.3.** Ներքին աուդիտ:
Վարկային կազմակերպության ներսում, սահմանված պահանջների կատարումը և ապահովումը վերահսկելու նպատակով ստեղծվում է ներքին աուդիտ («<u>Ներքին աուդիտ</u>»): Ներքին աուդիտը կատարում է հետևյալ գործառույթները.

**15.3. Internal Audit.**
The internal audit ("<u>Internal Audit</u>") shall be established to oversee the compliance and assurance function within the Credit Organization. The Internal Audit shall perform the following functions:

ա) Ապահովում է Վարկային կազմակերպության գործունեության համապատասխանությունը Հայաստանի գործող օրենսդրության պահանջներին, Վարկային կազմակերպության նկատմամբ տարածվող՝ Բաժնետերերի քաղաքականություններին և այլ

a) ensure that the activities of the Credit Organization are in compliance with applicable Armenian Law, policies of the Shareholders to which the Credit Organization is subject to and other applicable standards.

կիրառելի ստանդարտներին,

բ) Վերստուգում է Վարկային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները,

b) review results of the financial activity of the Credit Organization;

գ) Վերլուծում է Վարկային կազմակերպության գործունեության, դրա աշխատակիցների մասնագիտական գործունեության, ինչպես նաև Վարկային կազմակերպության պաշտոնատար անձանց կողմից լիազորությունների չարաշահման դեպքերի վերաբերյալ տեղեկություններ և հաշվետվություններ,

c) analyze information and reports on the activity of the Credit Organization, on professional activity of its employees, on the cases of abuse of authority by the officers of the Credit Organization;

դ) Վերստուգումն ավարտելուց հետո եզրակացություններ և առաջարկություններ է ներկայացնում Վերստուգողին, Վարչությանը և Տնօրենների խորհրդի Աուդիտի հանձնաժողովին, եթե այդպիսին ստեղծվում է սույն Կանոնադրության համաձայն,

d) upon completion of the review, provide conclusions and recommendations to the Controller, the Executive Board and the Audit Committee of the Board of Directors, if such is established pursuant to this Charter;

ե) Կատարում է Վարկային կազմակերպության գործունեության ներքին վերստուգման և աուդիտի հետ կապված այլ գործառույթներ:

e) other functions associated with the internal review and audit of the Credit Organization's activity.

Ներքին աուդիտը գործառնական առումով հաշվետու է «ՖԻՆԿԱ ինտերնեյշնլ ինք.»-ի Տարածաշրջանային աուդիտորին, իսկ վարչական առումով հաշվետու է Վարկային կազմակերպության Գլխավոր տնօրենին: Ներքին աուդիտը հաշվետու է Վերստուգողին և Տնօրենների խորհրդի Աուդիտի հանձնաժողովին, եթե այդպիսին ստեղծվում է սույն Կանոնադրության համաձայն: Հաշվետու լինելն իրականացվում է Վարկային կազմակերպության ներքին քաղաքականությունների և ընթացակարգերի համաձայն:

The Internal Audit shall be operationally responsible to the FINCA International, Inc.'s Regional Auditor and administratively reports to the General Director of the Credit Organization. The Internal Audit shall be accountable to the Controller and the Audit Committee of the Board of Directors, if such is established pursuant to this Charter. Reporting shall be conducted in accordance with the internal policies and procedures of the Credit Organization.

**15.4.** Արտաքին աուդիտ:
Հայաստանի օրենսդրությամբ պահանջվող կարգով Վարկային կազմակերպության

**15.4. External Audit.**
As required under the Armenian Law, on an annual basis, the activity of the Credit Organization shall be subject to review by an external auditor, i.e., an

գործունեությունը տարին մեկ անգամ ստուգվում է արտաքին աուդիտորի, այսինքն՝ անկախ աուդիտորական կազմակերպության կողմից, որը լիցենզավորվել է Հայաստանի տարածքում նման ստուգումներ իրականացնելու համար և այլ առումներով իրավասու է աուդիտորական հաշվետվություններ ներկայացնել Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին և Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին («IAS») համապատասխան («Արտաքին աուդիտոր»):

independent audit organization licensed in Armenia to conduct such reviews and otherwise authorized to provide audit reports in accordance with the Armenian accounting standards and IAS (the "External Auditor").

## ՀՈԴՎԱԾ 16. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՏՅԱՆՆԵՐԸ, ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ, ՀԱՇՎԱՀԱՊԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

**16.1. Հաշվառումը:**
Վարկային կազմակերպության Վարչության այն անդամները, որոնք պատասխանատու են հաշիվների և ֆինանսական հաշվետվությունների նախապատրաստման և վարման համար, պատասխանատվություն են կրում հաշիվներ հաշվետվություններում պարունակվող տեղեկությունների իսկության, Հայաստանի օրենսդրությամբ պահանջվող կարգով փաստաթղթային ու էլեկտրոնային տեսքով հաշվառումների պատշաճ և անվտանգ պահպանման, ինչպես նաև Վարկային կազմակերպության պարբերական և տարեկան ֆինանսական և այլ հաշվետվությունները ժամանակին ՀՀ կենտրոնական բանկին , Տնօրենների խորհրդին, Բաժնետերերին և Հայաստանի Հանրապետության այլ իրավասու մարմինների ներկայացնելու համար: Վարկային կազմակերպությունը պարտավոր է իր կորպորատիվ գրառումները պահպանել իր գրանցված հասցեում:
Ֆինանսական հաշվետվությունները, վիճակագրական հաշվառման հաշվետվությունները և պարբերական ֆինանսական հաշվետվությունները պետք է նախապատրաստվեն և, պահանջվող չափով, ներկայացվեն ՀՀ կենտրոնական բանկին և

## ARTICLE 16. BOOKS, RECORDS, ACCOUNTING AND REPORTING OF THE CREDIT ORGANIZATION

**16.1. Record-Keeping.**
Members of the Executive Board of the Credit Organization responsible for preparation and maintenance of accounts and financial records shall bear responsibility for the authenticity of the information contained in the accounts, for proper and safe record-keeping in documentary and electronic form, as required by the Armenian Law, and for timely submission of periodic and annual financial and other reports of the Credit Organization to the CBA, Board of Directors, Shareholders and other relevant authorities of the Republic of Armenia. The Credit Organization shall keep its corporate records at its registered address.
Financial records, statistical accounting and periodic financial reports shall be prepared and, to the extent required, submitted to the CBA and other competent governmental authorities and to the Board of Directors and the Shareholders' Meeting in conformity with this Charter, accounting principles mandated by the Armenian Law and IAS. The Credit Organization shall regularly submit to the CBA (and other authorities in accordance with the Armenian Law) such reports and information as the CBA (or another authority) may require.

պետական այլ իրավասու մարմինների, ինչպես նաև Տնօրենների խորհրդին և Բաժնետերերի ժողովին սույն Կանոնադրության, Հայաստանի օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման սկզբունքների և Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների («IAS») համաձայն: Վարկային կազմակերպությունը պարտավոր է պարբերաբար ՀՀ կենտրոնական բանկին (և Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված այլ իրավասու պետական մարմինների) ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի (կամ այլ պետական մարմինների) կողմից պահանջվող հաշվետվություններ և տեղեկություններ:

**16.2.** Արժույթը:
Վարկային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները պետք է ներկայացվեն Հայաստանի Հանրապետության դրամով: Արժույթի փոխարկումները պետք է գրառվեն Հայաստանի օրենսդրության և հաշվապահական հաշվառման ընդունված սկզբունքների համաձայն: Վարկային կազմակերպությունն իրավասու է Տնօրենների խորհրդի սահմանած կարգով զուգահեռաբար վարել գրքեր դոլարով կամ այլ արտարժույթներով:

**16.2. Currency.**
The Credit Organization's financial results shall be stated in AMD. Currency conversions shall be recorded in accordance with the Armenian Law and sound accounting principles. The Credit Organization may maintain a parallel set of books in US Dollars or other foreign currencies, as shall be determined by the Board of Directors.

**16.3. Ֆինանսական տարին և տարեկան ֆինանսական հաշվետվությունը:**
Վարկային կազմակերպության ֆինանսական տարին համընկնում է օրացուցային տարվա հետ (հունվարի 1 – դեկտեմբերի 31): Վարկային կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունը հաստատվում է Բաժնետերերի տարեկան ժողովի կողմից:

**16.3. Fiscal Year and Annual Financial Report.**
The fiscal year of the Credit Organization shall be the calendar year (January 1 - December 31). The annual report of the Credit Organization shall be approved by the Annual Shareholders' Meeting.

**16.4. Վարկային կազմակերպության գրառումների հասանելիությունը Բաժնետերերին:**
Վարկային կազմակերպությունը պարտավոր է ապահովել Վարկային կազմակերպությունների գրառումների հասանելիությունը Բաժնետերերին և

**16.4. Shareholders Access to the Credit Organization's Records.**
The Credit Organization shall ensure that the Shareholders and members of the Board of Directors shall have access to the Credit Organization records and shall provide copies thereof upon request.

Տնօրենների խորհրդի անդամներին և պահանջի դեպքում տրամադրել դրանց կրկնօրինակներ:

## ՀՈԴՎԱԾ 17. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՈՒՍՏՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

**17.1. Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը:**
Վարկային կազմակերպությունը կարող է Հայաստանի Հանրապետությունում կամ արտերկրում ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք իրավաբանական անձի կարգավիճակ չունեն: Հայաստանի Հանրապետությունում ստեղծվելու դեպքում դրանք իրավունք կունենան գործել ՀՀ կենտրոնական բանկում հաշվառվելուց հետո, իսկ արտերկրում ստեղծվելու դեպքում դրանք կարող են բացվել և գործել համապատասխան պետության օրենքների համաձայն:
Վարկային կազմակերպությունը հաստատում է իր մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնակարգերը, որոնցում սահմանվում են դրանց իրավասությունները և լուծարման կարգը:
Վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների բացումը, հաշվառումը և լուծարումն իրականացվում է Հայաստանի օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ նախատեսված կարգով:
Վարկային կազմակերպության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գործում են Վարկային կազմակերպության անունից, վերջինիս կողմից իրենց վերապահված լիազորությունների սահմաններում: Վարկային կազմակերպությունը պատասխանատու է իր մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության համար: Մասնաճյուղերը և ներկայացուցչությունները ֆինանսական գործառնություններ են իրականացնում Հայաստանի օրենսդրության համաձայն (դրամով կամ արտարժույթով), սույն Կանոնադրության և համապատասխան մասնաճյուղի կամ ներկայացուցչության

## ARTICLE 17. SUBDIVISIONS AND SUBSIDIARIES OF THE CREDIT ORGANIZATION

**17.1. Establishment of Branches and Representative Offices.**
The Credit Organization may establish, either in the Republic of Armenia or abroad, branch and representative offices that are not legal entities. In case if they are established in the Republic of Armenia they shall be able to operate after registration with the CBA and in case if they are founded abroad they may be opened and operate in accordance with the laws of such other countries.
The Credit Organization shall approve regulations on its branch and representative offices where their powers and liquidation process shall be defined.
The opening, registration and liquidation of the branch and representative offices of the Credit Organization shall be carried out in accordance with the procedure defined by the Armenian Law and this Charter.
Branches and representative offices of the Credit Organization shall operate in the name of the Credit Organization in accordance with the powers granted by the latter. The Credit Organization shall be responsible for the activity of its branches and representative offices. The branch and representative offices shall carry out financial transactions in accordance with the Armenian Law (either in AMD or in foreign currencies), this Charter and the charter of the relevant branch or representative office.

կանոնադրության համաձայն:

**17.2.** Դուստր ձեռնարկության ստեղծումը:
Վարկային կազմակերպությունը կարող է Հայաստանի Հանրապետությունում կամ արտերկրում ստեղծել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր ձեռնարկություններ կամ մասնակից լինել դրանց: Հայաստանի Հանրապետությունում ստեղծվելու դեպքում դրանք ենթակա են գրանցման Հայաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ արտերկրում ստեղծվելու դեպքում՝ համապատասխան պետության օրենքներով սահմանված կարգի համաձայն:

**17.2. Establishment of a subsidiary.**
The Credit Organization may establish, either in the Republic of Armenia or abroad, legal entity subsidiaries or otherwise participate in them. In the event they are founded in the Republic of Armenia they should be registered in accordance with the procedure prescribed by the Armenian Law and if they are founded abroad they should be registered in accordance with the procedure prescribed by the laws of such other countries.

## ՀՈԴՎԱԾ 18. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

## ARTICLE 18. REORGANIZATION AND LIQUIDATION OF THE CREDIT ORGANIZATION

**18.1.** Վերակազմակերպում:
Վարկային կազմակերպությունը կարող է հոժարակամ վերակազմակերպվել Բաժնետերերի որոշման հիման վրա, Հայաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով: Վերակազմակերպումը կարող է տեղի ունենալ միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման կամ վերակազմավորման ձևով: Վերակազմակերպման դեպքում Վարկային կազմակերպության իրավունքները և պարտավորություններն փոխանցվում են նրա իրավահաջորդին/-ներին և նրա կողմից նշված անձին/անձանց:

**18.1. Reorganization.**
The Credit Organization may be reorganized voluntarily by a decision of the Shareholders in accordance with Armenian law. Reorganization shall take place in the form of merger, acquisition, division, separation or transformation. In the event of reorganization, the rights and obligations of the Credit Organization shall be transferred to its successor(s) and assignee(s).

**18.2.** Լուծարում:
Վարկային կազմակերպության լուծարումը հանգեցնում է վարկային կազմակերպության գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու և Վարկային կազմակերպության՝ որպես իրավաբանական անձի գոյության դադարեցման: Վարկային կազմակերպությունը կարող է լուծարվել հետևյալ կարգով.

**18.2. Liquidation.**
Liquidation of the Credit Organization shall result in revocation of its license to operate as a credit organization and termination of the Credit Organization's existence as legal entity. The Credit Organization shall be liquidated as follows:

ա) Հայաստանի օրենսդրության համաձայն նման որոշում կայացնելու

a) by order of a relevant court or arbitrator empowered to grant such order pursuant to

իրավասություն ունեցող համապատասխան դատարանի կամ արբիտրի որոշմամբ,

Armenian law;

բ) Բաժնետերերի որոշմամբ՝ ՀՀ կենտրոնական բանկից նախապես ստացված համաձայնությամբ, կամ

b) by a decision of the Shareholders with prior consent of the CBA; or

գ) Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքերով:

c) on other grounds stipulated by the Armenian law.

Անվճարունակության կամ սնանկության դեպքում Վարկային կազմակերպությունը լուծարվում է անվճարունակության (սնանկության) մասին Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն:

In the event of insolvency or bankruptcy, the Credit Organization shall be liquidated in accordance with the insolvency (bankruptcy) laws of the Republic of Armenia.

**18.3.** Լուծարային հանձնաժողովը:
Վարկային կազմակերպության Բաժնետերերի նախաձեռնությամբ Վարկային կազմակերպության լուծարումն ի կատար է ածվում Հայաստանի օրենսդրության համաձայն, նախապես ՀՀ ԿԲ-ից ստացված համաձայնությամբ: Վարկային կազմակերպության լուծարումն իրականացվում է Հայաստանի օրենսդրության համաձայն Բաժնետերերի նշանակած լուծարային հանձնաժողովի («Լուծարային հանձնաժողով») կողմից, իսկ դատարանի որոշմամբ լուծարման դեպքում, դատարանի նշանակած Լուծարային հանձնաժողովի կողմից: Լուծարային հանձնաժողովը պետք է կազմված լինի առնվազն 3 հոգուց: Լուծարային հանձնաժողովը գնահատում է Վարկային կազմակերպության ակտիվները, բացահայտում պարտավորությունները, դրանց հետ կապված վերջնահաշվարկներ կատարում, և կազմում ու Բաժնետերերի հաստատմանն է ներկայացնում լուծարային հաշվեկշիռը:

**18.3. Liquidation Commission.**
Liquidation of the Credit Organization on the initiative of the Credit Organization's Shareholders shall be executed in accordance with the Armenian law and with the prior consent of the CBA. Liquidation of the Credit Organization shall be carried out by the liquidation commission (hereinafter the "Liquidation Commission") appointed by the Shareholders in accordance with the Armenian law, and, in case of liquidation by a judicial decision, by the Liquidation Commission appointed by the court. The Liquidation Commission should comprise of at least 3 persons. The Liquidation Commission shall appraise the assets of the Credit Organization, reveal its liabilities, make settlements in relation thereto, and draw up and submit a liquidation balance sheet for approval to the Shareholders.

**18.4.** Լուծարման կարգը:
Վարկային կազմակերպության լուծարումն իրականացվում է Բաժնետերերի կողմից հաստատված և Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված լուծարման ընթացակարգի համաձայն:

**18.4. Liquidation Procedure.**
The liquidation of the Credit Organization shall be carried out in accordance with the liquidation procedure approved by the Shareholders and the Armenian law.
The term for submitting creditors' demands shall be set forth in the announcement on the liquidation

Պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետը սահմանվում է Վարկային կազմակերպության լուծարման մասին հայտարարության մեջ, որը հրապարակվում է թերթերում Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված կարգով:
Վարկային կազմակերպությունը համարվում է լուծարված Լուծարային հանձնաժողովի գործունեության հաշվետվության՝ ՀՀ ԿԲ-ի կողմից հաստատվելուց հետո: ՀՀ ԿԲ-ում վարկային կազմակերպությունների ռեեստրում և Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում կատարվում են համապատասխան գրառումներ Վարկային կազմակերպության լուծարման մասին:

of the Credit Organization to be published in the newspapers in accordance with the procedure defined by the Armenian law.
The Credit Organization shall be deemed to be liquidated after approval of the report of the Liquidation Commission on its activities by the CBA. Relevant records shall be made in the Credit Organizations registry at the CBA and with the State Register of Legal Entities on the liquidation of the Credit Organization.

**18.5.** Բաշխումը:
Վարկային կազմակերպության լուծարման դեպքում դրա բոլոր միջոցները, այդ թվում՝ Վարկային կազմակերպության գույքի օտարումից ստացված հասույթը Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված հերթականությամբ ուղղվում են Վարկային կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարմանը: Մնացորդը Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված հերթականությամբ բաշխվում է Վարկային կազմակերպության Բաժնետերերի միջև՝ վերջիններիս բաժնետոմսերի թվաքանակին, տեսակին և դասին համամասն:

**18.5. Distribution.**
In the event of the liquidation of the Credit Organization, all of its funds, including the proceeds received from the alienation of the property of the Credit Organization, shall be used to satisfy demands of the creditors of the Credit Organization in a sequence prescribed by the Armenian law. The balance shall be distributed among the Shareholders of the Credit Organization in a sequence prescribed by the Armenian law in proportion to the number, type and class of their shares.

## ՀՈԴՎԱԾ 19.
## ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**19.1.** Գաղտնի տեղեկություններ:
Բաժնետերը (Բաժնետերերը) ընդունում է ի գիտություն, որ հնարավոր են դեպքեր, երբ անհրաժեշտ կլինի, որպեսզի ինքը Վարկային կազմակերպությանը հայտնի, կամ Վարկային կազմակերպությունն իրեն՝ Բաժնետիրոջը հայտնի որոշ առևտրային գաղտնիքներ, հմտություններ (know-how), ինչպես նաև գաղտնի կամ խորհրդապահական բնույթի տեխնիկական, ֆինանսական, առևտրային և/կամ գործարար տեղեկություններ («<u>Գաղտնի տեղեկություններ</u>»): Եթե Բաժնետերը կատարում է նման տեղեկությունների տրամադրում թույլատրող այլ

## ARTICLE 19.
## MISCELLANEOUS PROVISIONS

**19.1. Confidential Information.**
The Shareholder(s) acknowledge that it may need to disclose to the Credit Organization, or the Credit Organization may have a need to disclose to the Shareholder certain commercial secrets, know-how, technical, financial, commercial and/or business information of a private or confidential nature (the "<u>Confidential Information</u>"). Provided that the Shareholder complies with the broader commitments taken under other agreements allowing the disclosure of such information, the Shareholder shall ensure that its subsidiaries, directors, officers, agents, and personnel keep confidential the Confidential Information pertaining to the Credit Organization, and the Credit Organization shall ensure that its subsidiaries, directors, officers, agents, and

պայմանագրերով իր ստանձնած ավելի ընդհանուր բնույթի հանձնառությունները, ապա Բաժնետերը պարտավոր է ապահովել, որպեսզի իր դուստր ձեռնարկությունները, տնօրենները, պաշտոնատար անձինք, գործակալները և աշխատակիցները գաղտնի պահեն Վարկային կազմակերպությանը վերաբերող Գաղտնի տեղեկությունները, իսկ Վարկային կազմակերպությունը պարտավոր է ապահովել, որպեսզի իր դուստր ձեռնարկությունները, տնօրենները, պաշտոնատար անձինք, գործակալները և աշխատակիցները գաղտնի պահեն Բաժնետիրոջը վերաբերող Գաղտնի տեղեկությունները, և որևէ կերպ չօգտագործել այդ տեղեկությունները, բացառությամբ երբ դրա համար գրավոր ստացվել է Գաղտնի տեղեկությունների տիրոջ թույլտվությունը:

personnel keep confidential the Confidential Information pertaining to the Shareholder, and make no use thereof unless permitted in writing by the owner of the Confidential Information.

**19.2. Նամակագրությունը:**
Վարկային կազմակերպության և վերջինիս Բաժնետիրոջ միջև ցանկացած նամակագրություն պետք է լինի գրավոր, անգլերեն, և, եթե անհրաժեշտ է, հայերեն, այդ նամակագրությունն ուղարկող անձի ստորագրությամբ: Ծանուցումները և այլ գրությունները համարվում են պատշաճ կերպով տրված, երբ առաքվում են. (ա) առձեռն՝ ստացման հաստատմամբ, (բ) տելեքսով, ֆաքսիմիլով կամ հաղորդման այլ միջոցներով՝ ստացման հաստատմամբ, կամ (գ) պատվիրված փոստով. սակայն, պայմանով, որ այդ ծանուցումները և այլ գրություններն ուղարկվեն համապատասխան կողմի՝ Բաժնետերերի ռեեստրում նշված հասցեով: Ծանուցումը համարվում է ստացված և օրինական ուժ ունի ստացման հաստատման օրվա դրությամբ: Բաժնետերը կարող է այդպիսի փաստաթղթերի և նամակագրության ստացման համար նշել ցանկացած այլ հասցե՝ այդ մասին ծանուցելով Վարկային կազմակերպությանը, ընդ որում, այդ դեպքում նման տեղեկություններն անհապաղ զետեղվումեն Բաժնետերերի ռեեստրի մեջ:

**19.2. Correspondence.**
Any correspondence to be made between the Credit Organization and its Shareholders shall be in writing in English and, if necessary, in Armenian and signed by a person sending such correspondence. Such notice and other correspondence shall be deemed to have been duly given or made when it is delivered: (a) in hand with receipt confirmation; (b) by telex, facsimile or other means of transmission with receipt confirmation; or (c) by express mail; provided that such notice or communication is sent at such party's address specified in the Shareholder Register. The notice shall be deemed to be received and effective as of the date of its receipt confirmation. The Shareholder may specify any other address for receipt of such documents or correspondence by notifying the Credit Organization thereof, which information should be immediately incorporated in the Shareholder Register.

**19.3. Կառավարող օրենսդրությունը և**

**19.3. Governing Law and Arbitration.**

արբիտրաժը:
Սույն Կանոնադրությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և մեկնաբանվում ՀՀ օրենսդրության համաձայն՝ հաշվի չառնելով դրանով նախատեսված՝ օրենսդրական նորմերի բախման սկզբունքները:
Այն դեպքում, երբ առաջ են գալիս վեճեր մի կողմից Վարկային կազմակերպության, իսկ մյուս կողմից՝ նրա Բաժնետերերի, վերջիններիս խնամակալների, լուծարային կառավարիչների կամ լիազոր ներկայացուցիչների միջև, որոնք վերաբերում են սույն Կանոնադրության բուն իմաստին, մեկնաբանմանը, կիրառմանը կամ ազդեցությանը, Հայաստանի օրենսդրության համաձայն կատարված, կնքված, բաց թողնված կամ կրած ցանկացած երևույթի, կամ Վարկային կազմակերպության կամ վերջինիս գործերի վրա ազդող որևէ խախտման, ենթադրյալ խախտման, կամ որևէ իրավական ակտի կամ որևէ դրույթի, նման տարաձայնությունները ենթակա են լուծման արբիտրաժային կարգով ՝ միանձնյա արբիտրի կողմից, որը պետք է անցկացվի ԱՄՆ-ի Կոլումբիա օկրուգի Վաշինգտոն քաղաքում՝ Արբիտրաժի ամերիկյան միության (American Arbitration Association)՝ այդ ժամանակ գործող Արբիտրաժի միջազգային կանոնների (International Arbitration Rules) համաձայն: Արբիտրաժի արդյունքում կայացվող արբիտրաժային ցանկացած որոշում կարող է ի կատար ածվել համապատասխան պետության ցանկացած դատարանի կողմից: Կողմերից յուրաքանչյուրն ինքն է կրելու իր սեփական ծախսերը, այդ թվում, առանց սահմանափակման, իրավաբանների վճարները, արբիտրաժի և ցանկացած այլ վեճի հետ կապված ծախսերն ու վճարները:

This Charter shall be governed by, and shall be construed in accordance with, the laws of the Republic of Armenia, without regard to the principles of conflict of laws therein.
Whenever any dispute arises between the Credit Organization on the one hand and any of its Shareholders, their executors, administrators or assigns on the other hand touching the true intent or construction or the incidence or consequences of this Charter, touching anything done or executed, omitted or suffered in pursuance of the Armenian Law, or touching any breach or alleged breach or otherwise relating to the premises or to any ordinance affecting the Credit Organization or to any of the affairs of the Credit Organization, such difference shall be settled by arbitration by a single arbitrator, which shall be conducted in Washington, D.C. pursuant to the then prevailing International Arbitration Rules. of the American Arbitration Association. Any arbitral award resulting from arbitration may be enforced by any court of competent jurisdiction. Each party shall bear its own costs, including but not limited to attorneys' fees, of arbitration and any litigation thereon.

**19.4.** Անջատելիությունը և բաժինների վերնագրերը:
Սույն Կանոնադրության դրույթներից յուրաքանչյուրն անջատելի է սույն Կանոնադրության ցանկացած այլ դրույթից, և սույն Կանոնադրության մեկ կամ մի քանի դրույթների անվավերությունը կամ

**19.4. Severability and Section Headings.**
Each of the provisions of the present Charter is severable from every other provision of the present Charter and the invalidity or unenforceability of any one or more provisions of the present Charter shall not affect the validity or enforceability of the remaining provisions of the present Charter. The section headings contained in the present Charter

անկիրարկելիությունը չի ազդում սույն Կանոնադրության մնացած դրույթների վավերության կամ կիրարկելիության վրա: Սույն Կանոնադրության մեջ տեղ գտած՝ բաժինների վերնագրերը միայն հղումներ անելու համար են նախատեսված և չեն կարող որևէ կերպ ազդել սույն Կանոնադրության իմաստի կամ մեկնաբանության վրա:

are for reference purposes only and shall not affect in any way the meaning or interpretation of the present Charter.

**19.5.** Լեզու:
Սույն Կանոնադրությունը կազմվել և հաստատվել է վեց անգլերեն և վեց հայերեն բնօրինակներով: Ցանկացած տարաձայնության դեպքում պետք է գերակայի հայերեն տարբերակը, իսկ անգլերեն տարբերակը պետք է համապատասխանաբար ուղղվի և փոփոխվի՝ սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով:

**19.5. Language**.
The present Charter is made and executed in six English and six Armenian originals. In the event of any inconsistency, the Armenian version shall prevail and the English version shall be corrected and amended accordingly pursuant to a procedure set forth in the present Charter.

Համարակալված, կնքված և կարված է

61 (վաթսունմեկ) թերթ:

ԿԲ Կազմակերպման և զարգացման բաժնի պետ՝

[illegible] ____________

անուն, ազգանուն  ստորագրություն

վերահսկող՝

[illegible] ____________

անուն, ազգանուն  ստորագրություն